

Հավելված N 2

ՀՀ կառավարության 2012 թվականի  
օգոստոսի 2-ի N 982 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ  
ԿՈՆՑԵՍԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

SOUTHERN ARMENIA RAILWAY  
CONCESSION AGREEMENT

## ՑԱՆԿ

Հոր-վառ I	ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ .....	5
Հոր-վառ II	ԿՈՆՑԵՍԻԱ .....	12
Հոր-վառ III	ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ .....	15
Հոր-վառ IV	ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ .....	17
Հոր-վառ V	ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄՐՑԱԿՑՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ .....	19
Հոր-վառ VI	ԻՐԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ .....	19
Հոր-վառ VII	ՄԻՋԱՆՑՔ .....	21
Հոր-վառ VIII	ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ .....	23
Հոր-վառ IX	ՆԱԽԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄ .....	26
Հոր-վառ X	ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ .....	26
Հոր-վառ XI	ՀԱՎԱՍՏԻԱՅՈՒՄ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	29
Հոր-վառ XII	ԹԵՐԱՅՈՒՄ .....	30
Հոր-վառ XIII	ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ) .....	32
Հոր-վառ XIV	ԿՈՆՑԵՍԻՈՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄԸ .....	33
Հոր-վառ XV	ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ .....	34
Հոր-վառ XVI	ՎԱՂԱԺԱՍԿԵՏ ԴԱՂԱՐԵՅՈՒՄԸ .....	34
Հոր-վառ XVII	ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ .....	40
Հոր-վառ XVIII	ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԸ .....	40
Հոր-վառ XIX	ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	41
ՀԱՎԵԼՎԱԾ «Ա»	ՆԱԽԱԳԾԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ .....	46
ՀԱՎԵԼՎԱԾ «Բ»	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԱԽԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ ...	47

## TABLE OF CONTENTS

ARTICLE I	DEFINITIONS AND INTERPRETATION .....	5
ARTICLE II	CONCESSION .....	12
ARTICLE III	CONDITIONS PRECEDENT .....	15
ARTICLE IV	DURATION .....	17
ARTICLE V	COMPETING TRANSPORTATION SYSTEMS .....	19
ARTICLE VI	FEASIBILITY STUDY .....	19
ARTICLE VII	CORRIDOR .....	21
ARTICLE VIII	PROJECT FINANCING .....	23
ARTICLE IX	DESIGN AND CONSTRUCTION .....	26
ARTICLE X	OPERATION AND MAINTENANCE .....	26
ARTICLE XI	REPRESENTATION AND WARRANTIES .....	29
ARTICLE XII	DEFAULT .....	30
ARTICLE XIII	FORCE MAJEURE .....	32
ARTICLE XIV	CONCESSION PERIOD EXTENSION .....	33
ARTICLE XV	INDEMNIFICATION .....	34
ARTICLE XVI	EARLY TERMINATION .....	34
ARTICLE XVII	DISPUTE RESOLUTION .....	40
ARTICLE XVIII	GOVERNING LAW .....	40
ARTICLE XIX	MISCELLANEOUS .....	41
SCHEDULE A	PROJECT PARAMETERS .....	46
SCHEDULE B	PRELIMINARY MAP OF SOUTHERN ARMENIA RAILWAY CORRIDOR .....	47

ՍՈՒՅՆ ԿՈՆՑԵՍԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔԵԼ Է 2012թ. ՀՈՒԼԻՍԻ 28-ԻՆ, ՄԻԱՑՑԱԼ ԱՐԱՐԱԿԱՆ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈՒԲԱՅ ՔԱՂԱՔՈՒՄ.

THIS CONCESSION AGREEMENT IS MADE IN DUBAI, UNITED ARAB EMIRATES, ON 28 JULY 2012 BETWEEN:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (ստորև՝ «Կառավարություն»), որի անունից լիազորված է հանդես գալ տրանսպորտի և կապի նախարար պարոն Գագիկ Բեգլարյանը.

THE REPUBLIC OF ARMENIA, represented by the Government of the Republic of Armenia (the "Government"), on whose behalf Mr. Gagik Beglaryan, Minister of Transportation and Communications, is authorized to act,

և

and

ՌԱՍԻԱ ՖՋԷ-ի (ստորև՝ «Կոնցեսիոներ»)՝ Արաբական Միացյալ Էմիրություններում հիմնադրված սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ ի դեմս ընկերության գլխավոր գործադիր տնօրեն և միակ բաժնետեր Ջոզեֆ Կ. Բորկովսկու, ՄԻՋԵԿ:

RASIA FZE (the "Concessionaire"), a limited liability corporation established in the United Arab Emirates, represented by its Chief Executive Officer and Sole Shareholder, Joseph K. Borkowski.

ՆԱՍՏԱԲԱՆ

PREAMBLE

ՔԱՆԻ ՈՐ Կառավարությունը ցանկանում է բարելավել Հայաստանի Հանրապետության տրանսպորտային համակարգը.

WHEREAS, the Government wishes to improve the transportation system of the Republic of Armenia;

ՔԱՆԻ ՈՐ Կառավարությունը շահավետ է համարում Հայաստանի Հանրապետության տրանսպորտային ենթակառուցվածքի բարելավման գործում մասնավոր հատվածի ներգրավումը՝ մասնավոր հատվածի «նոու-հաուս», գործարար կապերը և կապիտալն օգտագործելու առումով.

WHEREAS, the Government deems it advantageous to have private sector participation in the improvement of its transportation infrastructure so as to benefit from private sector know-how, business connections and capital;

ՔԱՆԻ ՈՐ Կառավարությունը դիմել է Ռասիա ՖՋԷ-ին, որպեսզի վերջինս ուղղակիորեն և (կամ) Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված իր անմիջական կամ անուղղակի դուստր ընկերության միջոցով իրականացնի Հայաստանի գործող կենտրոնական երկաթուղային համակարգի և Մեղրի քաղաքի մոտ գտնվող մայրաստանի հարավային սահմանի միջև նոր երկաթուղու ֆինանսավորման, նախագծման, կառուցման, վերականգնման, տիրապետման, գործարկման, շահագործման և սպասարկման ծրագիրը.

WHEREAS, the Government has asked Rasia FZE to implement directly and/or through a direct or indirect subsidiary established in the Republic of Armenia the project for financing, designing, building, rehabilitating, possessing, commissioning, operating and maintaining a new railway between the existing operating central railway system of Armenia and Armenia's southern border near the city of Meghri;

ՔԱՆԻ ՈՐ նոր երկաթուղու կառուցման բյուջեն, ըստ նախնական գնահատականի, կկազմի առնվազն 1.7 միլիարդ ԱՄՆ դոլար.

WHEREAS, the budget for constructing the new railway, as preliminarily estimated, will be no less than USD 1.7 billion;

ՔԱՆԻ ՈՐ Ռասիա ՖՋԷ-ն ցանկանում է ուղղակիորեն և (կամ) դուստր ընկերության միջոցով իրականացնել վերոնշյալ ծրագիրը.

WHEREAS, Rasia FZE is willing to implement the aforesaid project directly and/or through a direct or indirect subsidiary established in the Republic of Armenia;

ՔԱՆԻ ՈՐ ի լրումն բաժնեհավաք կապիտալում ներդրման, որը Ռասիա ՖՋԷ-ն ցանկանում է ապահովել, վերոնշյալ ծրագիրը ենթադրում է առնվազն 75%-ի չափով փոխառու ֆինանսավորման ներգրավում՝ համապատասխան պարտավորությունների կատարման ապահովման միջոցների տրամադրմամբ, առանց որի Ռասիա ՖՋԷ-ի համար ծրագիրը չի կարող իրագործելի լինել, և

WHEREAS, in addition to any equity investment that Rasia FZE is willing to arrange, the aforesaid project implies at least 75% debt financing through secured lending without which implementation of the project may not be feasible for Rasia FZE; and

ՔԱՆԻ ՈՐ փոխառու ֆինանսավորման արդյունավետ ներգրավումը, ի թիվս այլ հանգամանքների, էապես կախված կլինի Ռասիա ՖՋԷ-ի ունակությունից՝ տրամադրելու արժեքավոր և իրավական առումով հուսալի պարտավորությունների կատարման ապահովման միջոցներ, որոնց վրա հնարավոր է բռնագանձում տարածել կոմերցիոն առումով հիմնավոր և ողջամիտ եղանակով, ինչպես նաև բարենպաստ և կայուն իրավական դաշտի առկայությունից:

WHEREAS, successfully attracting debt financing will *inter alia* substantially depend on the Rasia FZE's ability to grant valuable and legally reliable security interests, which may be foreclosed upon in a reasonably and commercially sound manner, as well as on the availability of a favorable and stable legal framework.

ՉԵՏԵՎԱԴԵՍ, ԿՈՂՄԵՐԸ ՍՈՒՅՆՈՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ԵՆ ՉԵՏԵՎՑԱԼԻ ՄԱՍԻՆ.

NOW, THEREFORE, THE PARTIES AGREE AS FOLLOWS:



1 ՀԱՍԿԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն Պայմանագրում (ներառյալ՝ Նախաբանում և Հավելվածներում) հետևյալ բառերը և արտահայտություններն ունեն հետևյալ իմաստները

• **Պայմանագիր**՝ նշանակում է սույն Կոնցեսիոն Պայմանագիրը՝ դրա պայմաններին համապատասխան ժամանակ առ ժամանակ կատարված փոփոխություններով:

• **Կոնցեսիա**՝ նշանակում է Ծրագրի իրականացման իրավունքը և պարտավորությունը:

• **Կոնցեսիոն Վճար**՝ հասկացությունն ունի Բաժին 4-ում [Կոնցեսիոն Վճար] դրան վերագրված իմաստը:

• **Կոնցեսիայի Տարածք**՝ նշանակում է կենտրոնական Հայաստանի գործող երկաթուղային համակարգից և Սևանա լճի մոտ գտնվող Գավառ/Նորադուզ գործող երկաթուղային գծի ճյուղավորումից դեպի հարավ ընկած Հայաստանի Հանրապետության տարածքը:

• **Կոնցեսիոներ**՝ նշանակում է Ռասիա ՖԶԷ ընկերությունը, դրա օրինական իրավահաջորդները և այն թույլատրելի անձինք, ում զիջվել կամ փոխանցվել են դրա իրավունքները:

• **Կոնցեսիոների Թերացման Դեպք**՝ նշանակում է հետևյալ դեպքերից որևէ մեկը՝

(a) Կոնցեսիոները թույլ է տվել իր՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների էական խախտում, և նման էական խախտումը շարունակվում է այդ մասին Կառավարության կողմից գրավոր ծանուցումից հետո 30 (երեսուն) օր անընդմեջ պայմանով, որ եթե նման էական խախտումը Կոնցեսիոների կողմից ձեռնարկված ողջամիտ քայլերից հետո նշված 30 (երեսուն) -օրյա ժամկետում չի հաջողվում շտկել, ապա Կոնցեսիոները կարող է շանսիքաբար շարունակել ձեռնարկել քայլեր նման շտկման ուղղությամբ:

(b) Կոնցեսիոները 30 (երեսուն) օր անընդմեջ ժամկետով ամբողջությամբ կամ որևէ էական չափով դադարեցրել է Հայաստանի Հարավային Երկաթուղու շահագործումը կամ երկաթուղային փոխադրումների ծառայությունների մատուցումը:

(c) Կոնցեսիոները զիջում է Ծրագրի նկատմամբ իր իրավունքները կամ թույլ է տալիս Կոնցեսիոների նկատմամբ վերահսկողության փոփոխություն առանց Կառավարության համաձայնության, կամ խախտում է Կառավարության նախապատվության իրավունքը:

(d) Կոնցեսիոները 6 (վեց) ամիս անընդմեջ չի վճարում Կոնցեսիոն Վճարը կամ դրա որևէ մասը, կամ

(e) վրա է հասել Կոնցեսիոների Գործունեության Դադարեցման Դեպք:

• **Կոնցեսիոների Գործունեության Դադարեցման Դեպք**՝ նշանակում է հետևյալ դեպքերից որևէ մեկը՝

(a) Կոնցեսիոներն անկարող է կամ ընդունում է իր անկարողությունը վճարելու պարտքերը՝ դրանց վճարման ժամկետների լրանալուն պես, կամ կատարում է իրավունքների համընդհանուր զիջում հոգուտ իր պարտատերերի:

(b) Կոնցեսիոների պարտատիրոջ կողմից Կոնցեսիոների կամ Կոնցեսիոների ակտիվների որևէ զգալի մասի նկատմամբ նշանակվել է հավաքագրող, ստօրինող, կառավարիչ կամ նման այլ անձ:

(c) Կոնցեսիոները ճանաչվել է սևանկ կամ անվճարունակ, կամ

1 DEFINITIONS

In this Agreement (including the Preamble and Schedules) the following words and expressions have the following meanings:

• **“Agreement”** means this Concession Agreement as amended from time to time in accordance with its terms;

• **“Concession”** means the right and obligation to implement the Project;

• **“Concession Fee”** has the meaning ascribed thereto in Section 4 [Concession Fee];

• **“Concession Territory”** means the territory of the Republic of Armenia south of the existing railway system in central Armenia and the existing track extension to Gavar/Noraduz near Lake Sevan;

• **“Concessionaire”** means Rasia FZE, its legal successors, permitted assigns and transferees;

• **“Concessionaire Event of Default”** means any of the following events:

(a) The Concessionaire is in material breach of its obligations under this Agreement and such material breach continues for 30 (thirty) consecutive days after written notice thereof from the Government, provided, however, that if such material breach cannot be cured after reasonable diligence by the Concessionaire within such 30 (thirty) days’ time period, then the Concessionaire may continue diligently to attempt such cure;

(b) The Concessionaire fully or materially ceases the operation of the Southern Armenia Railway or the provision of rail transportation services, for 30 (thirty) consecutive days;

(c) The Concessionaire assigns its rights in respect of the Project or allows change of the Concessionaire control without the Government’s consent or infringes upon the Government’s right of first refusal;

(d) The Concessionaire fails to pay the Concession Fee or any portion thereof for a period of 6 (six) consecutive months; or

(e) A Concessionaire Termination Event;

• **“Concessionaire Termination Event”** means any of the following events:

(a) The Concessionaire is unable or admits its inability to pay its debts generally as they become due, or makes a general assignment for the benefit of its creditors;

(b) A receiver, manager, administrator or other similar person is appointed by a creditor of the Concessionaire with respect to the Concessionaire or any material part of the assets of the Concessionaire;

(c) The Concessionaire is declared bankrupt or insolvent; or

(d) կայացվել է որոշում Կոնցեսիոների գործունեության դադարեցման կամ լուծարման մասին:

«Գաղտնի Տեղեկություն» հասկացությունն ունի Բաժին 70-ում [Գաղտնիություն] դրան վերագրված իմաստը.

«Հինարարական Պայմանագրեր» հասկացությունն ունի Բաժին 9(i)-ում [Հինարարության Նախապայմաններ] դրան վերագրված իմաստը.

«Միջանցք» հասկացությունն ունի Բաժին 9(e)-ում [Հինարարության Նախապայմաններ] դրան վերագրված իմաստը: Ինչպես մտավորապես պատկերված է Հավելված «Բ»-ում ներկայացված քարտեզի վրա, նախատեսվում է, որ Միջանցքը հյուսիսում պետք է սկիզբ առնի Սևանա լճի մոտ գտնվող Գավառ/Նորադուզ կետից: Կասկածները բացառելու համար Միջանցքը չի ներառելու այնպիսի հողատարածքներ, որոնք անհրաժեշտ են ժամանակավոր նկատառումներով, օրինակ ժամանակավոր պահեստավորման, պահեստների, կառուցարանների, շինարարական մեխանիզմների մոտակայքում և այլնի համար, և նման հողատարածքները ինքնուրույն վարձակալվելու կամ այլապես ձեռք են բերվելու Կոնցեսիոների կողմից, բացառությամբ պետական սեփականության հողերի, որոնք կտրամադրվեն անհատույց՝ անհրաժեշտ ժամկետով.

«Բարենպաստ Ռեժիմ» հասկացությունն ունի Բաժին 13-ում [Բարենպաստ Ռեժիմ] դրան վերագրված իմաստը.

«Իրագործելիության Ուսումնասիրություն» հասկացությունն ունի Բաժին 9(e)-ում [Հինարարության Նախապայմաններ] դրան վերագրված իմաստը.

«Ֆինանսավորող Կողմ» նշանակում է Ծրագրի համար եական նշանակություն ունեցող փոխառու ֆինանսավորում տրամադրող որևէ անձ, որի նկատմամբ Կոնցեսիոների պարտավորությունները ապահովված են Կոնցեսիոների բաժնեմասնակցության և (կամ) սույն Պայմանագրից բխող որևէ իրավունքների և (կամ) Ծրագրի համար եական նշանակություն ունեցող որևէ ակտիվների գրավով:

«Ֆորս Մաժորային Դեպք» նշանակում է ցանկացած դեպք կամ հանգամանք, որը (i) գտնվում է այն վկայակոչող Կողմի ողջամիտ վերահսկողությունից դուրս, (ii) չի հանդիսանում այն վկայակոչող Կողմի գործողության կամ բացթողման արդյունք, (iii) չի հանդիսանում գործողություն կամ բացթողում, որի ռիսկերը Կողմը համաձայնել է ստանձնել սույն Պայմանագրով և (iv) չի կարող շտկվել, վերացվել, շրջանցվել, չեղարացվել, կարգավորվել կամ այլ կերպ հաղթահարվել այն վկայակոչող Կողմի շուտափույթ ձեռնարկված բարեխիղճ բայլերի արդյունքում, այդ թվում՝ (այնքանով, որքանով դրանք համապատասխանում են (i)-(iv) դրույթներով սահմանված չափորոշիչներին) հետևյալ դեպքերը և հանգամանքները՝

- (a) Հանրապետական Նշանակության Քաղաքական Ֆորս Մաժոր,
- (b) Տարածաշրջանային Նշանակության Քաղաքական Ֆորս Մաժոր,
- (c) զերձայնային արագությամբ ընթացող օդանավից կամ այլ օդային սարքից առաջացած հարվածային ալիքներ,
- (d) օդանավերից կամ այլ թռչող սարքերից ընկնող առարկաներ, կամ երկնաքարեր,
- (e) կայծակ, հրդեհ, երկրաշարժ, ջրիեղեղ, երաշտ, հրաբխային ժայթքում, սողանք, փլուզում, տորնադո կամ կարկուտ,
- (f) տեղական մասշտաբի բողոքի ակցիաներ կամ այլ նման դեպքեր, որոնք ուղղակիորեն կապված են Ծրագրի կամ Միջանցքի հետ,
- (g) աղետալի խափանում՝ պայմանավորված գրունտային կամ լեռնա-երկրաբանական անկանխատեսելի պայմաններով, և
- (h) Հատուկ Դեպք, որը պայմանավորված է անհաղթահարելի ուժի ազդեցությամբ.

«Կառավարություն» հասկացությունն ունի սույն Պայմանագրի ներածական մասում դրան վերագրված իմաստը.

«Կառավարության Թերացման Դեպք» նշանակում է ստորև թվարկված

(d) A decision is adopted to wind-up or liquidate the Concessionaire;

“Confidential Information” has the meaning ascribed thereto in Section 70[Confidentiality];

“Construction Agreements” has the meaning ascribed thereto in Section 9(i) [Conditions Precedent to Construction];

“Corridor” has the meaning ascribed thereto in Section 9(e) [Conditions Precedent to Construction]. As indicatively shown on the map presented in Schedule B, it is envisaged that the Corridor shall start at its northern point at Gavar/Noraduz near Lake Sevan. For the avoidance of doubt, the Corridor shall not include any lands necessary for temporary purposes such as for temporary storage, warehouses, hangars, mounting of construction machinery etc., and such lands shall be independently leased or otherwise acquired by the Concessionaire, except for the state-owned lands, which shall be provided free of charge for the needful period;

“Favorable Regime” has the meaning ascribed thereto in Section 13 [Favorable Regime];

“Feasibility Study” has the meaning ascribed thereto in Section 9(e) [Conditions Precedent to Construction];

“Financing Party” means any person providing debt financing, which has material significance for the Project, the Concessionaire's obligations to whom are secured by pledge of any shareholding interest in the Concessionaire and/or any rights arising out of this Agreement and/or any assets having material significance for the Project;

“Force Majeure Event” means any event or circumstance which is (i) beyond the reasonable control of the Party relying thereon, (ii) is not the result of any act or omission of the Party relying thereon, (iii) is not an act or omission, the risks of which the Party has agreed to assume under this Agreement, and (iv) cannot be cured, remedied, avoided, offset, negotiated or otherwise overcome by the prompt exercise of due diligence by the Party relying thereon, including (to the extent that they satisfy the criteria set forth in (i) through (iv)) the following events and circumstances:

- (a) Republic Political Force Majeure;
- (b) Regional Political Force Majeure;
- (c) Pressure waves caused by aircraft or other aerial device travelling at supersonic speed;
- (d) Objects falling from aircrafts or other aerial devices or meteorites;
- (e) Lightning, fire, earthquake, flooding, drought, volcanic eruption, landslide, rockslide, tornado, or hail;
- (f) Local protests or other similar local events directly related to the Project or the Corridor;
- (g) A catastrophic failure arising as a result of unforeseeable ground or rock conditions; and
- (h) A Special Event resulting from of an event of force majeure;

“Government” has the meaning ascribed thereto in the introductory part of this Agreement;

“Government Event of Default” means any of the following

- (a) Կառավարությունը թույլ է տվել իր սույն Պայմանագրով կամ դրա կապակցությամբ իր հետ կնքված որևէ այլ պայմանագրով սահմանված պարտավորությունների էական խախտում.
- (b) Կառավարությունը չի հաստատում Միջանցքը կամ Կոնցեսիոնների չի շնորհում Միջանցքի նկատմամբ իրավունքը, ինչպես նախատեսված է Հոդված VII-ում (Միջանցք).
- (c) Կառավարությունը 6 (վեց) ամիս անընդմեջ չի վճարում ուղևորափոխադրման սուբսիդիան կամ դրա որևէ մասը.

- (a) The Government is in material breach of its obligations under this Agreement or any other related agreement to which it is a party;
- (b) The Government fails to confirm the Corridor and grant to the Concessionaire the right to the Corridor as provided at Article VII [Corridor];
- (c) The Government fails to pay the subsidy for passenger transportation services or any part thereof for a period of 6 (six) consecutive months;

(d) Կառավարությունը կամ Հայաստանի Հանրապետության որևէ Պետական Մարմին չի պահպանում կիրառելի Օրենսդրությունը և նման խախտումը էական բացասական ազդեցություն է ունենում Կոնցեսիոնների կամ Օրագրի վրա.

(d) The Government or any State Authority of the Republic of Armenia fails to comply with the applicable Legislation and such failure has a material adverse effect on the Concessionaire or the Project;

(e) Կառավարությունը կամ Հայաստանի Հանրապետության որևէ Պետական Մարմին անհիմն կերպով՝ առանց Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ նախատեսված հիմնավոր պատճառի (i) չի տալիս որևէ Թույլտվություն, (ii) որևէ Թույլտվության համար ներկայացվող դիմումներում սահմանում է մեկ կամ մի քանի պայման, որոնք զորոնականում բացառում են այդ Թույլտվության տրամադրումը, կամ (iii) որևէ Թույլտվությունում սահմանում է մեկ կամ մի քանի պայման, որոնք էական բացասական ազդեցություն ունեն Կոնցեսիոնների կամ Օրագրի վրա.

(e) The Government or any State Authority of the Republic of Armenia in an ungrounded manner, i.e. without any grounded cause provided for by the Legislation of the Republic of Armenia (i) fails to issue any Permits, (ii) adds to any Permit applications one or more conditions that effectively prevent the issuance of such Permits, or (iii) adds to any Permits one or more conditions that have a material adverse effect on the Concessionaire or the Project;

(f) Կառավարությունը կամ Հայաստանի Հանրապետության որևէ Պետական Մարմին կիրառում է սեկվեստր, ռեկվիզիցիա կամ բռնագրավում, կամ անհիմն կերպով՝ առանց Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ նախատեսված հիմնավոր պատճառի այլ կերպ առգրավում է Կոնցեսիոնների, վերջինիս որևէ բաժնետիրոջ կամ դուստր ընկերության բաժնեմասնակցությունը կամ ակտիվներն ամբողջությամբ կամ մասամբ.

(f) The Government or any State Authority of the Republic of Armenia sequesters, requisitions, expropriates or otherwise seizes in an ungrounded manner, i.e. without any grounded cause provided for by the Legislation of the Republic of Armenia all or part of the shares or assets of the Concessionaire or any of its shareholders or subsidiaries; or

(g) ստորև նշվածներից որևէ մեկի ուժի մեջ մտնելը՝ (i) Հայաստանի Հանրապետության նոր Օրենսդրություն, կամ (ii) սույն Պայմանագրի մեկնարկի պահին ուժի մեջ գտնվող Օրենսդրության փոփոխությունը (այդ թվում՝ ուժը կորցրած ճանաչումը), որի արդյունքում՝ յուրաքանչյուր դեպքում, Օրագիրն ամբողջությամբ կամ զգալի չափով դառնում է անիրավաչափ կամ տևտեսապես անարդյունավետ՝ անգամ հաշվի առնելով սույն Պայմանագրով նախատեսված Կոնցեսիայի ժամկետը երկարաձգելու հնարավորությունը և հատուցումները.

(g) The coming into effect of (i) a new Legislation of the Republic of Armenia, or (ii) a modification (including repeal) of the Legislation of the Republic of Armenia existing on the commencement of this Agreement that in either case has the effect of rendering the Project illegal or uneconomical in whole or in a substantial part even given the possibility of extending the term of the Concession and the indemnities provided for by this Agreement.

•Օրենսդրություն՝ նշանակում է որևէ Պետական Մարմնի կողմից ընդունված ցանկացած և բոլոր ակտերը, իրավական ակտերը, օրենսգրքերը, օրենքները, միջազգային պայմանագրերը, կանոնակարգերը, հրամանագրերը, որոշումները, պաշտոնական պարզաբանումները, կարգադրությունները, կանոնադրությունները, հրահանգները, ուղեցույցները, կանոնները կամ քաղաքականությունը.

•Legislation՝ means any and all enactments, statutes, codes, laws, international treaties, regulations, decrees, decisions, administrative interpretations, ordinances, by-laws, directives, guidelines, rules, or policies of any State Authority;

•Կողմ՝ նշանակում է Կառավարությունը կամ Կոնցեսիոնները, իսկ •Կողմեր՝ նշանակում է նրանք երկուսը միասին.

•Party՝ means the Government or the Concessionaire, and •Parties՝ means both of them;

•Թույլտվություններ՝ նշանակում է Օրենսդրությամբ պահանջվող թույլտվությունները, համաձայնությունները, հաստատումները, հավաստագրերը, թույլատրագրերը, լիցենզիաները, լիազորումները և օրենքի վրա հիմնված պայմանագրերը.

•Permits՝ means all permissions, consents, approvals, certificates, permits, licenses, authorizations and statutory agreements required by the Legislation;

•Օրագիր՝ հասկացությունն ունի Բաժին 3-ում [Կոնցեսիայի Շնորհում] դրան վերագրված իմաստը.

•Project՝ has the meaning ascribed thereto in Section 3 [Grant of Concession];

•Օրագրի Ֆինանսավորում՝ հասկացությունն ունի Բաժին 9(j)-ում [Շինարարության Նախապայմաններ] դրան վերագրված իմաստը.

•Project Financing՝ has the meaning ascribed thereto in Section 9(j) [Conditions Precedent to Construction];

•Տարածաշրջանային Լշանակության Քաղաքական Ֆորս Մաժոր՝ նշանակում է հետևյալ Ֆորս Մաժորային Դեպքերից որևէ մեկը՝

•Regional Political Force Majeure՝ means any of the following Force Majeure Events:

- (a) պատերազմ (հայտարարված կամ չհայտարարված), ռազմական

- (a) War (whether declared or undeclared), invasion,

ներխուժում, զինված հակամարտություն կամ արտաքին բռնամու կողմից իրականացված գործողություններ, յուրաքանչյուր դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հետ սահմանակից պետությունում կամ տարածքում կամ նման պետության կամ տարածքի դեմ,

- (b) ապստամբություն, հեղափոխություն, քաղաքացիական անհնազանդություն, պետական հեղաշրջում, խռովություն կամ անկարգություն, ենեզադուլ, ահաբեկչական գործողություններ, կամ նման գործողությունների անմիջական սպառնալիք յուրաքանչյուր դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հետ սահմանակից պետությունում կամ տարածքում կամ նման պետության կամ տարածքի դեմ,
- (c) տնտեսական կամ առևտրային պատժամիջոցներ, էմբարգո կամ շրջափակում, յուրաքանչյուր դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հետ սահմանակից պետության կամ տարածքի դեմ, և
- (d) միջուկային պայթյուն, ռադիոակտիվ կամ քիմիական աղտոտում, յուրաքանչյուր դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հետ սահմանակից պետության կամ տարածքի ներսում:

«Հանրապետական Նշանակության Քաղաքական Ֆորս Մաժոր» նշանակում է ստորև թվարկված դեպքերից յուրաքանչյուրը՝

- (a) պատերազմ (հայտարարված կամ չհայտարարված), ռազմական ներխուժում, զինված հակամարտություն կամ արտաքին բռնամու կողմից իրականացված գործողություններ, յուրաքանչյուր դեպքում՝ Հայաստանի Հանրապետության ներսում կամ դեմ,
- (b) ապստամբություն, հեղափոխություն, քաղաքացիական անհնազանդություն, պետական հեղաշրջում, խռովություն կամ անկարգություն, ենեզադուլ, ահաբեկչական գործողություններ կամ նման գործողությունների անմիջական սպառնալիք, յուրաքանչյուր դեպքում՝ Հայաստանի Հանրապետության ներսում կամ դեմ,
- (c) տնտեսական կամ առևտրային պատժամիջոցներ, էմբարգո կամ շրջափակում, յուրաքանչյուր դեպքում՝ Հայաստանի Հանրապետության դեմ, և
- (d) միջուկային պայթյուն, ռադիոակտիվ կամ քիմիական աղտոտում, յուրաքանչյուր դեպքում՝ Հայաստանի Հանրապետության ներսում,

«Շարժակազմ» նշանակում է գնացքաքաշեր (լոկոմոտիվներ), ուղևորատար վագոններ, բեռնատար վագոններ, ինչպես նաև այլ փոխադրամիջոց, որոնք կարող են օգտագործվել երկաթուղային գծերի վրա, ինչպես նաև դրանց հետ առնչվող սարքավորումները և պահեստամասերը,

«Հայաստանի Հարավային Արագընթաց Ճանապարհ» նշանակում է ծրագրվող՝ Սիսիանից Մեղրի արագընթաց ավտոմոբիլային ճանապարհը,

«Հայաստանի Հարավային Երկաթուղի» նշանակում է նոր երկաթուղային գիծ, որը կապելու է իրար (i) կենտրոնական Հայաստանի գործող երկաթուղային համակարգը և (կամ) Սևանա լճի մոտ գտնվող Գավառ/Նորադուզ գործող երկաթուղային գծի ճյուղավորումը և (ii) Մեղրիի մոտ գտնվող Հայաստանի հարավային սահմանը, որը ներառում է բոլոր երկաթգծերը, ճյուղավորումները, երկաթուղային պահուստային գծերը, կամուրջները, թունելները, կայանները, դեպոները, պահեստները, պահեստավորման հարմարությունները, կոնտեյներների բեռնման և բեռնաթափման հարմարությունները, բեռնակայանները, վերաբեռնման և ինտերմոդալ հարմարությունները, կայանատեղերը, կապի միջոցները, ազդանշանային համակարգերը, միջգծային փոխանցման համակարգերը, սպասարկման կայանները, տեխնիկական սպասարկման և վերանորոգման կայանները, գրասենյակները, իրային պահեստները, ինչպես նաև բոլոր հարակից հարմարանքները,

armed conflict or act of foreign enemy, in each case within or against a state or territory that borders the Republic of Armenia;

- (b) Rebellion, revolution, civil disobedience, insurrection, commotion or disorder, sabotage, acts of terrorism or the immediate threat of such acts, in each case within or against a state or territory that borders the Republic of Armenia;
- (c) Economic or trade sanctions, embargo, or blockade, in each case against a state or territory that borders the Republic of Armenia; and
- (d) Nuclear explosion, radioactive or chemical contamination, in each case within a state or territory that borders the Republic of Armenia;

“Republic Political Force Majeure” means each of the following Force Majeure Events:

- (a) War (whether declared or undeclared), invasion, armed conflict or act of foreign enemy, in each case within or against the Republic of Armenia;
- (b) Rebellion, revolution, civil disobedience, insurrection, commotion or disorder, sabotage, acts of terrorism or immediate threat of such acts, in each case within or against the Republic of Armenia;
- (c) Economic or trade sanctions, embargo, or blockade, in each case against the Republic of Armenia; and
- (d) Nuclear explosion, radioactive or chemical contamination, in each case within the Republic of Armenia;

“Rolling Stock” means any locomotive, coach, wagon or other vehicle that can be used on a railway track, as well as any related equipment and spare parts;

“Southern Armenia High Speed Road” means the proposed high speed road from Sisian to Meghri;

“Southern Armenia Railway” means a new railway link between (i) the existing railway system in central Armenia and/or the existing track extension to Gavar/Noraduz near Lake Sevan, and (ii) the southern Armenia border near Meghri, which shall include all works, tracks, sidings, bridges, tunnels, stations, depots, warehouses, storage facilities, container facilities, rail yards, transshipment and intermodal facilities, parking facilities, communications facilities, signaling, interswitching facilities, service stations, maintenance and repair facilities, offices, stores, as well as all other facilities, equipment and spare parts, which in the reasonable opinion of the Concessionaire are necessary or advisable to operate and maintain a railway similar to the one contemplated in this Agreement excluding, however,



արքայազնությունները և պահեստամասերը, որոնք Կոնցեսիոների ռոզամիտ կարծիքով անհրաժեշտ կամ ցանկալի են սույն Պայմանագրով բնակարկվող երկաթուղու նման մեկ այլ երկաթուղու շահագործման և սպասարկման համար, սակայն բացառությամբ Ծարժակազմի, մաքսային և սահմանային կետերի:

«Հատուկ Պեպ» նշանակում է հետևյալ դեպքերից որևէ մեկը, որը (i) գտնվում է Կոնցեսիոների ռոզամիտ վերահսկողությունից դուրս, (ii) չի հանդիսանում Կոնցեսիոների գործողության կամ բացթողման արդյունք, (iii) չի հանդիսանում գործողություն կամ բացթողում, որի դիմելը Կոնցեսիոները համաձայնել է ստանձնել սույն Պայմանագրով և (iv) չի կարող շտկվել, վերացվել, շրջանցվել, չեղարացվել, կարգավորվել կամ այլ կերպ հաղթահարվել Կոնցեսիոների շուտափույթ՝ ձեռնարկած բարեխիղճ քայլերի արդյունքում:

- (a) Երրորդ կողմի՝ վառելիքի, էլեկտրաէներգիայի, ջրի մատակարարման կամ որևէ այլ կոմունալ ծառայության մատուցման խափանումը:
- (b) Հայաստանի Հանրապետության հետ սահմանակից պետության կամ տարածքի կամ նման պետությունից կամ տարածքից ձգվող երկաթուղու կողմից՝ Կառավարության և (կամ) Կոնցեսիոների հետ ունեցած պայմանագրերի շրջանակներում որևէ պարտավորություն չկատարելը:
- (c) «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից՝ Կառավարության և (կամ) Կոնցեսիոների հետ ունեցած պայմանագրերի շրջանակներում որևէ պարտավորություն չկատարելը:
- (d) Մրագրի համար էական նշանակություն ունեցող՝ Միջանցքի տարածքում գտնվող հողատարածքների և (կամ) անշարժ գույքերի, և (կամ) Ծարժակազմի պատահական կորստի կամ վնասվածքի որևէ դեպք:
- (e) Կառավարության կամ որևէ Պետական Մարմնի գործողություն կամ անգործությունը, որը էական բացասական ազդեցություն ունի Կոնցեսիոների կամ Մրագրի վրա, կամ
- (f) Օրենսդրության Անբարենպաստ Փոփոխություն:

«Պետական Մարմին» նշանակում է ցանկացած ազգային, դաշնային, մարզային, տարածքային, համայնքային կամ տեղական մարմին, րվազի-պետական մարմին, նախարարություն, գործակալություն, հանձնաժողով, մարմին, պաշտոնյա կամ այլ պետական հաստատություն:

«Օրենսդրության Անբարենպաստ Փոփոխություն» նշանակում է սույն Պայմանագրի կնքման օրվա դրությամբ ուժի մեջ գտնվող կամ Բարենպաստ Ռեժիմի գործադրման արդյունքում ուժի մեջ մտած կիրառելի Հայաստանի Հանրապետության Օրենսդրության ցանկացած փոփոխություն, որը:

- (a) ավելացնում է Կոնցեսիոների հարկային պարտավորությունները,
- (b) Կոնցեսիոների նկատմամբ կիրառելի է դարձնում ցանկացած լրացուցիչ հարկեր, տուրքեր և/կամ պարտադիր վճարներ,
- (c) սահմանում է սահմանափակումներ արտաբերության գործառնությունների և օտարերկրյա կապիտալի վերաարտահանման նկատմամբ,
- (d) բռնագրավում է Կոնցեսիոներին պատկանող գույքը,
- (e) արգելքներ կամ սահմանափակումներ է սահմանում տեղեկատվություն կամ ակտիվներ Հայաստանի Հանրապետությունից արտահանելու կամ Հայաստանի Հանրապետություն ներմուծելու նկատմամբ,
- (f) սահմանափակում է կամ ժխտում է Կոնցեսիոների սույն Պայմանագրից բխող իրավունքները,
- (g) ներմուծում է նոր տեխնիկական ստանդարտներ և

the Rolling Stock, customs and border posts;

“Special Event” means any of the following events which is (i) beyond the reasonable control of the Concessionaire, (ii) is not the result of any act or omission of the Concessionaire, (iii) is not an act or omission, the risks of which the Concessionaire has agreed to assume under this Agreement, and (iv) cannot be cured, remedied, avoided, offset, negotiated or otherwise overcome by the prompt exercise of due diligence by the Concessionaire:

- (a) Failure of a third party to supply fuel, electricity, water or any other utility;
- (b) Failure by a state or territory that borders the Republic of Armenia or a railway from any such state or territory to observe or perform any of its obligations under any agreement with the Government and/or the Concessionaire;
- (c) Failure by “South-Caucasian Railway” CJSC to observe or perform any of its obligations under any agreement with the Government and/or the Concessionaire;
- (d) Any accidental loss or damage to the lands and/or immovables within the Corridor, which have material significance for the Project, and/or to the Rolling Stock;
- (e) Any act or failure to act by the Government or any State Authority having a material adverse effect on the Concessionaire or the Project; or
- (f) Unfavorable Change of Legislation;

“State Authority” means any national, federal, provincial, territorial, municipal or local government, quasi-government, ministry, agency, commission, body, officer or other public entity;

“Unfavorable Change of Legislation” means any change in the applicable Legislation of the Republic of Armenia in force on the date, on which this Agreement is signed, or turning into force in result of enactment of the Favorable Regime, which:

- (a) Increases the tax liabilities of the Concessionaire;
- (b) Makes Concessionaire subject to additional taxes, duties and/or mandatory payments;
- (c) Introduces limitations on foreign currency operations and foreign capital repatriation;
- (d) Confiscates the property owned by the Concessionaire;
- (e) Imposes restrictions or limitations on the export or import of assets or information to and from the Republic of Armenia;
- (f) Limits or denies the Concessionaire’s rights under this Agreement;
- (g) Introduces new technical standards and regulatory



կանոնակարգեր, բացառությամբ Շահագործման Ժամանակահատվածում կատարված միջազգայնորեն ընդունված տեխնիկական ստանդարտներից և կանոնակարգերից եպես չտարբերվող փոփոխությունների,

- (h) սահմանափակումներ է դնում սույն Պայմանագրի համաձայն կատարվող կամ Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գործողությունների վրա, կամ
- (i) որևէ փոփոխություններ է կատարում կիրառելի Օրենսդրությունում, որն անհնար է դարձնում Կոնցեսիոների կողմից ողջամիտ շահույթի վաստակումը,

եթե Օրենսդրության նման փոփոխությունների յուրաքանչյուր դեպք կարող է.

- (i) Կոնցեսիոների համար ավելացնել Ծրագրի իրականացման, Ծրագրի Ֆինանսավորման, և (կամ) Հայաստանի Հարավային երկաթուղու նախագծման, կառուցման, գործարկման, շահագործման, սպասարկման կամ հանձնման ծախսերը.
- (ii) Կոնցեսիոների համար նվազեցնել Կոնցեսիայից, Ծրագրից կամ Կոնցեսիայի շրջանակներում իրականացվող ցանկացած այլ գործունեությունից ստացվող զուտ եկամուտը
- (iii) անհնարին դարձնել սույն Պայմանագրի ներքո Կոնցեսիոների որևէ պարտավորության կատարումը կամ որևէ գույքային իրավունքի իրականացումը, կամ
- (iv) հանգեցնել սույն Պայմանագրի որևէ դրույթի առոչնչության կամ անվավերության:

## 2 ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն Պայմանագիրը պետք է մեկնաբանվի հետևյալ դրույթների համաձայն

- (a) Հոդվածներին, Բաժիններին և Հավելվածներին արված բոլոր հղումները հաղիսանում են հղումներ սույն Պայմանագրի Հոդվածներին, Բաժիններին և Հավելվածներին,
- (b) սույն Պայմանագրի Հավելվածները կազմում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը, և սույն Պայմանագրին արված հղումները ներառում են Հավելվածներին արված հղումներ,
- (c) եզակի թիվը ներառում է նաև հոգնակի թիվ և հակառակը, և, մասնավորապես, սույն Պայմանագրում եզակի թիվը սահմանված յուրաքանչյուր բառ կամ բառեր պետք է ունենան համապատասխան իմաստ՝ հոգնակի թիվը գործածվելու դեպքում, և հակառակը,
- (d) «սույնում», «սույնին», «սույնի», «սույնով» և նմանատիպ իմաստ ունեցող բառերը վերաբերում են սույն Պայմանագրին որպես մեկ ամբողջություն, այլ ոչ թե այն կոնկրետ Բաժնին կամ Հավելվածին, որտեղ նման բառը գործածվում է,
- (e) «ներառում է», «ներառյալ», «այդ թվում» բառերը մեկնաբանվում են համապատասխանաբար որպես «ներառում է, առանց սահմանափակման», «ներառելով, առանց սահմանափակման», «այդ թվում, առանց սահմանափակման»,
- (f) «անձ» բառն ընդգրկում է անհատ, կորպորացիա, գործընկերություն, համատեղ ձեռնարկություն, ասոցիացիա, միավորում, կենսաթոշակային հիմնադրամ, միություն կամ Պետական Մարմին, և ներառում է անհատի ժառանգներին, շահառուներին, կառավարիչներին և այլ իրավական ներկայացուցիչներին, և կորպորացիայի կամ այլ իրավաբանական անձի հավաքագրողներին և կառավարիչներին,
- (g) ընդհանրական բնույթի բառերին չի տրվում սպառիչ իմաստ, (i) եթե դրանք օգտագործվում են «այլ» բառի հետ միասին, այն փաստի ուժով, որ դրանց նախորդում են որևէ գործողության, երևույթի կամ առարկայի կոնկրետ դաս արտահայտող բառեր,

acts, except for any changes made during the Operation Period, which are not substantially different from the internationally recognized technical standards and regulations;

- (h) Imposes any limitations on actions performed under this Agreement or necessary for the implementation of the Project;
  - (i) Makes any changes to the applicable Legislation, which makes impossible earning of reasonable profit by the Concessionaire;
- where such changes to the Legislation may lead to:

- (i) Increases in cost to the Concessionaire of the Project implementation, Project financing and/or the design, construction, commissioning, operation, maintenance or hand over of the Southern Armenia Railway;
- (ii) Decreases in the Concessionaire's net income from the Concession, the Project or any other activity carried out under the Concession;
- (iii) Inability to fulfill any obligation or exercise any property right of the Concessionaire under this Agreement; or
- (iv) Nullification or invalidity of any provision of this Agreement.

## 2 INTERPRETATION

This Agreement shall be interpreted according to the following provisions:

- (a) All references to Articles, Sections and Schedules are references to Articles, Sections and Schedules of this Agreement;
- (b) The Schedules to this Agreement are an integral part of this Agreement, and references to this Agreement include references to the Schedules;
- (c) The singular includes the plural and vice-versa, and in particular any word or words herein defined in the singular shall have a corresponding meaning if used in the plural and vice versa;
- (d) The words "herein", "hereto", "hereof" and "hereunder" and other words of like meaning refer to this Agreement as a whole and not to the particular Section or Schedule in which such word is used;
- (e) The words "includes" and "including" are to be interpreted as meaning "includes without limitation" and "including without limitation", respectively;
- (f) "person" includes an individual, corporation, partnership, joint venture, association, trust, pension fund, union or State Authority, and includes the heirs, beneficiaries, executors or other legal representatives or administrators of an individual, and the receivers and administrators of a corporation or other juridical person;
- (g) General words are not given a restrictive meaning (i) if they are introduced by the word "other", by reason of the fact that they are preceded by words indicating a particular class of act, matter or thing, or (ii) by reason

կամ (ii) այն փաստի ուժով, որ դրանց հաջորդում են կոնկրետ օրինակներ, որոնք պետք է ներառված լինեն ընդհանրական բնույթի բառերի մեջ.

of the fact that they are followed by particular examples intended to be embraced by the general words;

(h) «բոլոր ողջամիտ ջանքեր» արտահայտությունը և նման իմաստ կրող արտահայտությունները, երբ օգտագործվում են Կողմի պարտավորության կապակցությամբ, նշանակում են նպատակին հասնելու և պարտավորությունների կատարման համար բարեխղճորեն և ջանասիրաբար ողջամիտ բոլոր քայլերի ձեռնարկում՝ ներառյալ այն ամենի կատարումը, ինչ կարելի է ողջամտության սահմաններում կատարել կոնկրետ հանգամանքների պարագայում հաշվի առնելով սույն Պայմանագրի ներքո Կողմի ստանձնած պարտավորությունները՝ մյուս Կողմի համար հետաձգումներն ու հավելյալ ծախսերը նվազեցնելու հետ կապված, և որևէ դեպքում չեն նշանակում նվազ քայլերի և ջանքերի ձեռնարկում, քան կկատարեր ողջամիտ և շրջահայաց անձը նմանատիպ հանգամանքներում, էթե պարտավորությունից ստացված ամբողջ օգուտը և նման քայլեր և ջանքեր ձեռնարկելու բոլոր արդյունքները ի շահ կլինեին բացառապես այդ անձի.

(h) The expression "all reasonable efforts" and expressions having a similar meaning, when used in connection with an obligation of a Party, mean taking in good faith and with due diligence all reasonable steps as to achieve the objective and to perform the obligation, including doing all that can reasonably be done under the circumstances taking into account the Party's obligations hereunder to mitigate delays and additional costs to the other Party, and in any event taking no less steps and efforts than those that would be taken by a reasonable and prudent person in comparable circumstances but where the whole of the benefit of the obligation and where all the results taking such steps and efforts accrued solely to that person's own benefit;

(i) Եթե այլ բան նշված չէ, ապա սույն Պայմանագրում գործածված բոլոր հաշվապահական և ֆինանսական եզրույթները մեկնաբանվում և կիրառվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (IFRS) համապատասխան.

(i) All accounting and financial terms used herein are, unless otherwise indicated, to be interpreted and applied in accordance with International Financial Reporting Standards (IFRS);

(j) Եթե որևէ գործողություն կատարելու ժամկետը համընկնում է Հայաստանում ոչ աշխատանքային օրվան կամ ավարտվում է Հայաստանում ոչ աշխատանքային օրը, ապա այդ գործողությունը կատարելու ժամկետը երկարաձգվում է մինչև Հայաստանում հաջորդ աշխատանքային օրը.

(j) If the time for doing an act falls or expires on a day which is not a business day in Armenia, then the time for doing such act shall be extended to the next business day in Armenia;

(k) սույն Պայմանագրի յուրաքանչյուր դրույթ պետք է Օրենսդրությամբ առավելագույնս թույլատրելի սահմաններում լինի վավեր և կիրառելի: Եթե սույն Պայմանագրի որևէ դրույթ որևէ ծավալով անվավեր, ոչ կիրառելի կամ անօրինական ճանաչվի, ապա նման դրույթը ենթակա է զատման, և նման անվավերությունը, ոչ կիրառելիությունն ու անօրինականությունը Օրենսդրությամբ առավելագույնս թույլատրելի սահմաններում չեն վնասի կամ ազդի սույն Պայմանագրի մնացած դրույթների վավերականության. կիրառելիության և օրինականության վրա: Եթե սույն Պայմանագրի այդպիսի որևէ դրույթ ճանաչվում է անվավեր, անկիրառելի կամ անօրինական, ապա Կողմերը պետք է անմիջապես բարեխղճորեն փորձեն բանակցել նոր դրույթների շուրջ, որպեսզի վերացնեն նման անվավերությունները, ոչ կիրառելիությունները կամ անօրինականությունները և Պայմանագիրը վերականգնեն իր նախնական նպատակին և արդյունքներին հնարավորինս մոտ ձևով.

(k) Each provision of this Agreement shall be valid and enforceable to the fullest extent permitted by Legislation. If any provision of this Agreement is held to be invalid, unenforceable or illegal to any extent, such provision may be severed and such invalidity, unenforceability and illegality will not prejudice or affect the validity, enforceability and legality of the remaining provisions of this Agreement to the fullest extent permitted by Legislation. If any such provision of this Agreement is held to be invalid, unenforceable or illegal, the Parties shall promptly endeavor in good faith to negotiate new provisions to eliminate such invalidity, unenforceability or illegality and to restore this Agreement as nearly as possible to its original intent and effect;

(l) Պատասխանատվության արձակման, ազատման և պարտազերծման վերաբերյալ բոլոր դրույթները, որոնք սույն Պայմանագրում արտահայտված են որևէ Կողմի օգտին, հանդիսանում են և պետք է մեկնաբանվեն հօգուտ և կարող են կիրառվել այդ Կողմի և դրա աշխատողների, տնօրենների, պաշտոնատար անձանց, պատվիրակների, ներկայացուցիչների, լիազորների և գործակալների կողմից, և Կողմը, ում շնորհիվ է որևէ նման պատասխանատվության արձակում, ազատում և պարտազերծում, կարող է իր ցանկությամբ և առանց պարտավորվածության նույնը կիրառել իր ցանկացած աշխատողի, տնօրենի, պաշտոնատար անձի, պատվիրակի, ներկայացուցչի, լիազորի և գործակալի նկատմամբ և անունից.

(l) All releases, waivers of liability and indemnities in this Agreement expressed to be given in favor of a Party are and shall be interpreted as having been given in favor of and may be enforced by that Party and its employees, directors, officers, delegates, representatives, mandataries and agents and the Party in whose favor any such release, waiver of liability or indemnity is expressed to be given may, at its option and without any obligation to do so, enforce the same for and on behalf of any such employees, directors, officers, delegates, representatives, mandataries and agents;

(m) ցանկացած ժամանակ, երբ սույն Պայմանագրում նախատեսվում է կամ սույն Պայմանագրի ներքո պահանջվում է Կողմի համաձայնություն կամ հաստատում, համաձայնություն կամ հաստատում տվող Կողմը պետք է գործի ողջամտորեն և բարեխղճորեն և չի կարող պարտադրել նոր, անողջամիտ կամ կամայական պայմաններ,

(m) Whenever a consent or approval of a Party is provided for herein or required hereunder, the Party giving the consent or approval must act reasonably and in good faith and may not impose new, unreasonable or arbitrary conditions;

(n) որևէ Պետական Մարմնի արված ցանկացած հղում պետք է համարվի այդ Պետական Մարմնի ցանկացած իրավահաջորդ(ներ)ին կամ Պետական Մարմնի գործառույթները կամ պարտականություններն ստանձնած կազմակերպությանը կամ մարմնին (կազմակերպություններին կամ մարմիններին) արված հղում ներառող, ինչպես նաև

(o) «էական խախտում» արտահայտությունն ունի Պայմանագրի կնքման պահին Հայաստանի Հանրապետության գործող Օրենսդրությամբ այդ արտահայտությանը վերագրված իմաստը:

## ՀՈԴՎԱԾ II ԿՈՆՑԵՍԻԱ

### 3 ԿՈՆՑԵՍԻԱՅԻ ԾՆՈՂՀՈՒՄ

Կոնցեսիոները սեփական ծախսով և ռիսկով իրավունք ունի և կրում է պարտավորություն

(a) սեփական միջոցների հաշվին ֆինանսավորել և իրականացնել իրագործելիության Ուսումնասիրությունը,

(b) սեփական միջոցների և ներգրավված Ծրագրի Ֆինանսավորման հաշվին կատարելու հետևյալը

(i) ֆինանսավորել, նախագծել, կառուցել, վերականգնել, տիրապետել, գործարկել, շահագործել և սպասարկել Հայաստանի Հարավային Երկաթուղին,

(ii) ֆինանսավորել, նախագծել, վերականգնել, տիրապետել, գործարկել, շահագործել և սպասարկել որպես Հայաստանի Հարավային Երկաթուղու մաս Կոնցեսիայի Տարածքում գտնվող և ներկայումս կամ նախկինում երկաթուղու շահագործման համար օգտագործվող ցանկացած և բոլոր ենթակառուցվածքներն ու սարքավորումները պայմանով, որ այդ ենթակառուցվածքներն ու սարքավորումները կներառվեն Հայաստանի Հարավային Երկաթուղու մտնեսապես և տեխնիկապես արդյունավետ կերպով,

(iii) ֆինանսավորել, նախագծել, կառուցել, վերականգնել, տիրապետել, գործարկել, շահագործել և սպասարկել Հայաստանի Հարավային Երկաթուղու կառուցման, շահագործման և սպասարկման համար անհրաժեշտ կամ ցանկալի բոլոր կոմունալ ծառայությունների ենթակառուցվածքները, այդ թվում էլեկտրաէներգիայի արտադրման, բաշխման և փոխանցման ենթակառուցվածքները, և

(iv) ձեռք բերել, վարձակալել կամ այլապես ապահովել Հայաստանի Հարավային Երկաթուղու շահագործման համար անհրաժեշտ կամ ցանկալի Ծարձակված,

(c) իրականացնել բեռնափոխադրումներ Հայաստանի Հարավային Երկաթուղով՝ Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով (ռազմավարական նշանակության բեռների փոխադրումը Հայաստանի Հարավային Երկաթուղով ենթակա կլինի Կողմերի միջև կնքված առանձին պայմանագրի),

(d) իրականացնել ուղևորափոխադրումներ Հայաստանի Հարավային Երկաթուղով պայմանով, որ Կողմերը պետք է նախապես գրավոր համաձայնության գտն նման փոխադրման պայմաններին, այդ թվում՝ Կառավարության կողմից Կոնցեսիոներին տրվող սուբսիդիայի չափի վերաբերյալ,

(e) կատարել ցանկացած այլ գործողություններ և իրականացնել ցանկացած այլ գործարար գործունեություն, որոնք անհրաժեշտ են կամ ողջամտորեն ցանկալի են վերը նշվածի համար,

(f) Կառավարությանը վճարել փոփոխական կոնցեսիոն վճար՝ Բաժին 4-ի [Կոնցեսիոն Վճար] համաձայն, և

(g) Կոնցեսիայի գործողության ժամկետի ավարտման կամ

(n) Any reference to a State Authority shall be deemed to include a reference to any successor(s) to such State Authority or any organization or entity or organizations or entities which has or have taken over the functions or responsibilities of such State Authority; and

(o) "Material breach" has the meaning ascribed to it under the Legislation of the Republic of Armenia in force at the moment of signing of this Agreement.

## ARTICLE II CONCESSION

### 3 GRANT OF CONCESSION

The Concessionaire shall have the right and obligation at its own cost and risk:

(a) to finance and carry out the Feasibility Study from its own funds;

(b) to implement from its own funds and attracted Project Financing, the following:

(i) finance, design, build, rehabilitate, possess, commission, operate and maintain the Southern Armenia Railway;

(ii) finance, design, rehabilitate, possess, commission, operate and maintain as part of the Southern Armenia Railway any and all infrastructures and facilities in the Concession Territory currently or formerly used in the operation of a railway provided that such infrastructure and facilities shall be incorporated in the Southern Armenia Railway in an economically and technically efficient manner;

(iii) finance, design, build, rehabilitate, possess, commission, operate and maintain all utilities required or advisable for building, operating and maintaining the Southern Armenia Railway, including electricity generation, distribution and transmission facilities; and

(iv) acquire, lease or otherwise arrange the Rolling Stock necessary or advisable for the operation of the Southern Armenia Railway;

(c) to haul freight on the Southern Armenia Railway in accordance with the procedure established by the Legislation of the Republic of Armenia (hauling of strategic freight on the Southern Armenia Railway shall be the subject of a separate agreement between the Parties);

(d) to carry passengers on the Southern Armenia Railway provided that the Parties have first agreed in writing as to the terms and conditions of such carriage, including as to the amount of subsidies from the Government to the Concessionaire;

(e) to do all such other things and carry out all such other businesses as may be necessary or reasonably advisable for any of the above;

(f) to pay to the Government a variable concession fee pursuant to Article 4 [Concession Fee]; and

(g) to rehabilitate and hand over the Southern Armenia

դրադրեցման պես վերականգնել և նորմալ աշխատանքային վիճակում Կառավարությանը հանձնել Հայաստանի Հարավային երկաթուղին.

Railway in good working order to the Government at expiration or termination of the Concession;

(Մրագիր):

(the "Project").

#### 4 ԿՈՆՑԵՍԻՈՆ ՎՃԱՐ

#### 4 CONCESSION FEE

4.1 Կոնցեսիոները Կառավարությանը վճարում է հաստատուն վճար Կոնցեսիայի գործողության յուրաքանչյուր օրացուցային տարվա համար տարեկան 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով մինչև Շահագործման Ժամանակահատվածի մեկնարի 10-րդ (տասներորդ) տարեկից օրացուցային տարվա ավարտը և այնուհետև վճարում է փոփոխական կոնցեսիոն վճար Հայաստանի Հարավային երկաթուղու շահագործումից ստացված տարեկան համախառն հասույթի որոշակի տոկոսի չափով, չհաշված ուղևորային ծառայություններից ստացված եկամուտները, Շահագործման Ժամանակահատվածի մեկնարի 10-րդ (տասներորդ) տարեկիցին հաջորդող յուրաքանչյուր օրացուցային տարվա համար («Կոնցեսիոն Վճար»): Փոփոխական Կոնցեսիոն Վճարի դրույքաչափը Շահագործման Ժամանակահատվածի մեկնարի 10-րդ (տասներորդ) տարեկիցին հաջորդող առաջին օրացույցային տարվա համար սահմանվում է 0.1% (մեկ տասնորդական տոկոսի) չափով և յուրաքանչյուր հաջորդ օրացուցային տարի հավելվում է 0.1% (մեկ տասնորդական տոկոսի) չափով մինչև 2% (երկու տոկոս) դրույքաչափի հասնելը, ինչից հետո մնում է անփոփոխ:

4.1 The Concessionaire shall pay to the Government a fixed concession fee for each calendar year of the Concession prior to the end of the 10-th (tenth) anniversary of the commencement of the Operation Period in the amount of 100 000 (one hundred thousand) Armenian Drams and shall pay thereafter a variable concession fee at a certain percentage of the annual gross revenue earned from the operation of the Southern Armenia Railway, excluding the revenues earned from the passenger services, for each calendar year following the 10-th (tenth) anniversary of the commencement of the Operations Period (the "Concession Fee"). The rate of the variable Concession Fee shall make 0.1% (ten basis points) for the first calendar year following the 10-th (tenth) anniversary of the commencement of the Operation Period, and shall increase for 0.1% (ten basis points) for each ensuing calendar year until it reaches the rate of 2% (two per cent) and shall remain unchanged thereafter.

4.2 Կոնցեսիոները մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը Կառավարությանն է ներկայացնում Կոնցեսիոն Վճարի հաշվարկը և մինչև մայիսի 31-ը վճարում է այն:

4.2 The Concessionaire shall submit to the Government the calculation of the Concession Fee for each reporting year by the 1<sup>st</sup> of May and shall pay the concession fee by the 31<sup>st</sup> of May of the ensuing year.

4.3 Կառավարությունն իրավունք ունի ողջամտորեն պահանջել և Կոնցեսիոների հաշվին ստանալ Կոնցեսիոն Վճարի հաշվարկը հաստատող աուդիտորական եզրակացություն՝ ճանաչված անկախ աուդիտորից:

4.3 The Government shall have the right to reasonably request and receive at the expense of the Concessionaire an audit statement confirming the calculation of the Concession Fee from a recognized independent auditor.

#### 5 ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ

#### 5 CONSORTIUM

Կառավարությունն ընդունում է, որ Մրագրի իրականացման նպատակով Կոնցեսիոները կարող է որդեգրել կոնսորցիումային մոտեցում, որի շրջանակներում Կոնցեսիոները, ամենայն հավանականությամբ, ներգրավելու է ներդրողների, միջազգային ֆինանսական հաստատությունների, ինստիտուցիոնալ և այլ փոխառուների, Հայաստանի Հարավային երկաթուղու շինարարության փուլում՝ մեկ կամ ավելի առաջնակարգ մասնագիտացված կառուցապատողների, Հայաստանի Հարավային երկաթուղու շահագործման փուլում՝ առաջնակարգ մասնագիտացված օպերատորի (ենթադրաբար՝ «Ռուսաստանյան երկաթուղիներ» ՓԲԸ-ին՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ից տարբերվող դուստր ընկերության միջոցով): Հետևաբար՝ Կոնցեսիոները կարող է կոչված լինել սերտորեն համագործակցել հայաստանյան և օտարերկրյա տարբեր կազմակերպությունների հետ (որոնք չեն առարկվում Կառավարության կողմից ազգային անվտանգության նկատառումներով), այդ թվում՝ Հայաստանի տրանսպորտային ոլորտում ներկայումս ներգրավված կամ ներգրավվելու ցանկություն ունեցող կազմակերպությունների հետ: Այդուհանդերձ, սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման համար Կառավարության առջև մշտապես լիովին պատասխանատու է լինելու Կոնցեսիոները:

The Government acknowledges that for the purpose of implementing the Project the Concessionaire may adopt a consortium approach, under which the Concessionaire will likely attract investors, international financial institutions, institutional and other lenders, one or more first-class specialized developers at the stage of building the Southern Armenia Railway, and a first-class specialized operator at the stage of operating the Southern Armenia Railway (presumably "Russian Railways" CJSC through a subsidiary other than "South-Caucasian Railway" CJSC). Consequently, the Concessionaire may be called upon to closely cooperate with various Armenian and foreign entities (not objectionable to the Government on grounds of national security), including entities currently involved or desirous to be involved in the Armenian transportation sector. However, the Concessionaire shall always remain fully liable before the Government for the performance of obligations under this Agreement.

#### 6 ՄԱՆՄԱՆԱՅԻՆ ՈՒ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏԻՐ

#### 6 BORDER AND CUSTOMS POSTS

Կառավարությունը՝ համակարգելով Կոնցեսիոների հետ, Հայաստանի Հանրապետության լիազորված Պետական Մարմինների միջոցով ֆինանսավորում, նախագծում, կառուցում, գործարկում, շահագործում և սպասարկում է սահմանային ու մարսային կետեր, որոնք անհրաժեշտ են և բավարար՝ Հայաստանի Հարավային

The Government shall, via authorized State Authorities of the Republic of Armenia and in coordination with the Concessionaire, finance, design, build, own, operate and maintain border and customs posts necessary and adequate for the proper operation of the Southern Armenia Railway.



7 ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

7.1 Հայաստանի Հարավային Երկաթուղու բոլոր ակտիվները, որոնք ենթակա են հանձնման Կառավարությանը Բաժին 65-ի [Կոնցեսիոները՝ Հանձնելու Պարտավորությունը] համաձայն, բացառությամբ Շարժակազմի, պետք է համարվեն Կառավարությանը տեղափոխության իրավունքով պատկանող և սույն Պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածով Կոնցեսիոների անհատույց տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված: Միջանցքը մնում է Կառավարության սեփականության ներքո և դրա սահմաններում կառուցած ցանկացած անշարժ գույք պետք է Կոնցեսիոների հաշվին գրանցվի Կառավարության անունով (կամ վերջինի կողմից նշված Պետական Մարմնի անունով)՝ դրանց նկատմամբ Կոնցեսիոների իրավունքների հետ մեկտեղ:

7.2 Առանց վերը նշվածի նկատմամբ որևէ սահմանափակման, Կոնցեսիոները պետք է իրավունք ունենան ձևափոխել, վերակառուցել, վերանորոգել, վերականգնել, փոխարինել և արդիականացնել Բաժին 7.1-ում նշված ակտիվները, եթե դա բխում է Մրագրի նպատակներից, առանց Կառավարության (որպես սեփականատիրոջ) հավանությունը ստանալու անհրաժեշտության՝ սույն Պայմանագրի Բաժին 43-ում [Պահպանում և Ջարգացում] նախատեսված ծրագրերի շրջանակներում, կամ, այլապես՝ Կառավարության գրավոր համաձայնությամբ, որի տրամադրումը չի կարող անողջամիտ կերպով մերժվել, և որը պետք է համարվի տրված, եթե Կառավարությունը գրավոր առարկություններ չի ներկայացնում Կոնցեսիոներին՝ վերջինիս գրավոր դիմումը ստանալու օրվանից հաշված 30 (երեսուն) օրվա ընթացքում: Կոնցեսիոները պետք է իրավունք ունենան վաճառել կամ այլ կերպ ազատորեն տնօրինել հեռացված ակտիվները, որոնք այլևս անհրաժեշտ չեն Մրագրի համար, և նման տնօրինման արդյունքում ստացված միջոցները պատկանում են Կոնցեսիոներին:

7.3 Բաժին 7.1-ում նշված ակտիվների նկատմամբ Կոնցեսիոների իրավունքները հաշվառվում են Կոնցեսիոների հաշվապահությունում որպես ոչ նյութական ակտիվներ, որոնք ունեն նույն արժեքը, ինչ ծախսվել է Կոնցեսիոների կողմից այդ ակտիվների համար:

7.4 Կողմերը համաձայնվում են կորոզիանցքներ և առանձին պայմանագրով կամ սույն Պայմանագրի հավելումով սահմանել Կոնցեսիոների կողմից Մրագրի հիմնական և այլ ակտիվների գույքագրման, հաշվապահական հաշվառման, ամորտիզացիայի, դուրս գրման ընթացակարգեր, ինչպես նաև արժեզրկված ակտիվների փոխարինման, օտարման և (կամ) տնօրինման ընթացակարգ, որոնք պետք է մտցնեն որոշակիություն և համապատասխանություն Օրենսդրության պահանջներին, ինչպես նաև ապահովեն ողջամիտ հավասարակշռություն մի կողմից՝ Կոնցեսիոների գործառնությունների ճկունության և մյուս կողմից՝ Կառավարության համար Կոնցեսիայի արժեքի պահպանման միջև:

7.5 Բաժին 7.1-ում նշված ակտիվների պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկերը կրում է և հավուր պատշաճ ապահովագրում է Կոնցեսիոները՝ ոլորտում կիրառվող բարեխիճ գործելակերպին համապատասխան: Նման ապահովագրությամբ չնախատեսված ռիսկերը, ինչպես նաև ռիսկերը, որոնք չեն կարող ապահովագրվել ողջամիտ պայմաններով, կրում է Կառավարությունը:

7.6 Կոնցեսիոների կողմից Միջանցքից դուրս գտնվող հողամասերի և անշարժ գույքերի ձեռքբերումը ենթակա չէ կարգավորման սույն Պայմանագրով: Նման ձեռքբերումների հետ կապված իրավահարաբերությունները անկախ են սույն Պայմանագրից:

8 ԿՈՆՅԵՍԻՈՆԵՐԻ ՆԿԱՏԱԱՄԲ ՆՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

8.1 Կոնցեսիոների անմիջական կամ անուղղակի սեփականատեր հանդիսացող անձի կամ անձանց նկատմամբ որևէ

7 TITLE

7.1 All of the assets of the Project which are subject to handover to the Government pursuant to Section 65 [Concessionaire Handover Obligations], except for the Rolling Stock, shall be deemed owned by the Government and shall be deemed to be handed over to the Concessionaire for its free possession and use for the entire term of validity of this Agreement. The Corridor shall remain the property of the Government and any immovable property built within the Corridor shall be registered at the cost of the Concessionaire to the name of the Government (or the State Authority nominated by the latter) together with the Concessionaire's rights thereto.

7.2 Without prejudice to the above, the Concessionaire shall have all rights to modify, rebuild, repair, rehabilitate, replace and modernize the assets specified in Section 7.1, as may be required for the purposes of the Project, without obtaining the Government's (as of the owner's) approval within the scope of the plans defined in Section 43 [Maintenance and Development] of this Agreement, or otherwise upon receipt of the Government's written consent, which shall not be unreasonably withheld and shall be deemed provided in case the Government does not submit to the Concessionaire written objections within 30 (thirty) days after receipt of the Concessionaire's written request. The Concessionaire shall have the right to sell or otherwise freely dispose of any removed assets, which are no longer necessary for the Project, and the proceeds from such disposal shall belong to the Concessionaire.

7.3 The Concessionaire's rights to the assets specified in Section 7.1 shall be booked in the Concessionaire's accounts as intangible assets having the same value as the Concessionaire's costs actually spent for such assets.

7.4 The Parties agree to coordinate and fix in a separate agreement or as an addendum hereto the procedures for inventory, accounting, depreciation, writing-off by the Concessionaire of the fixed and other assets of the Project, as well as the procedure for replacing, discarding and/or disposing of devalued assets, which shall establish certainty and compliance with the requirements of the Legislation and secure reasonable balance between the operational flexibility of the Concessionaire, on one side, and the preservation of the value of the Concession for the Government, on the other side.

7.5 The risk of accidental loss or damage of the assets specified in Section 7.1 shall be borne and duly insured by the Concessionaire in accordance with the good industry practices. Any risk not covered by such insurance and risks that cannot be insured at reasonable terms, shall be borne by the Government.

7.6 Acquisition by the Concessionaire of lands or immovables outside of the Corridor is not subject to regulation by this Agreement. Any legal considerations related to such other acquisitions are independent of this Agreement.

8 CONTROL OF CONCESSIONAIRE

8.1 There are no restrictions on the person or persons who may directly or indirectly own the



անձանափակում չի կիրառվում՝ պայմանով, որ ոչ մի անձ ինքնուրույն կամ իր հետ փոխկապակցված կամ համագործակցող անձանց հետ միասին չի կարող հսկողություն իրականացնել Կոնցեսիոների կամ դրա անմիջական բաժնետիրոջ նկատմամբ, եթե այդպիսի անձինք անընդունելի են Կառավարության համար՝ ազգային անվտանգության նկատառումներից ելնելով: Կոնցեսիոները հանձն է առնում նախօրոք ծանուցել Կառավարությանը հավանական այնպիսի փոփոխությունների մասին, որոնք կարող են հանգեցնել Կոնցեսիոների նկատմամբ հսկողության փոխանցմանը, և նման փոփոխությունները կարող են իրականացվել, միայն եթե Կառավարությունը ծանուցված լինելու օրվանից հաշված 30 (երեսուկ) օրվա ընթացքում առարկություն չի ներկայացնում Կոնցեսիոներին կամ չի իրականացնում Կոնցեսիոների կամ դրա անմիջական բաժնետիրոջ բաժնեմասնակցությունը ձեռք բերելու իր նախապատվության իրավունքը: Այդ կապակցությամբ Կոնցեսիոները հանձն է առնում ապահովել իր և իր անմիջական բաժնետիրոջ բաժնետիրական պայմանագրի, կանոնադրության և (կամ) այլ հիմնադիր փաստաթղթերի մեջ այնպիսի դրույթների ներառումը, որոնք կապահովեն վերը շարադրված սահմանափակման գործնական իրագործելիությունը՝ ինչպես Կառավարության համար տեղեկատվության թափանցիկության, այդպես էլ իրավական մեխանիզմների առումով:

8.2 Կոնցեսիոների (դրա անմիջական կամ անուղղակի բաժնեմասնակցության) կամ Կոնցեսիոների՝ Օրագրին վերաբերող իրավունքների և ակտիվների օտարումը, ինչպես նաև Օրագրի իրականացումը ստանձնելու իրավունքը, ենթակա են հետևյալ պայմաններին.

- (a) Կոնցեսիոներին կամ Կոնցեսիոների իրավունքների և ակտիվների ձեռքբերողի կամ Օրագրի իրականացումը ստանձնողի թեկնածությունը պետք է անընդունելի չլինի Կառավարության համար՝ ազգային անվտանգության նկատառումներից ելնելով,
- (b) Կոնցեսիոների իրավունքները և ակտիվները կարող են օտարվել միայն այնպիսի անձի կամ անձանց, որոնք ունակ են ապահովել Օրագրի շարունակականությունը և բնականոն ընթացքը,
- (c) Կոնցեսիոների իրավունքները և ակտիվները կարող են օտարվել միայն այնպիսի համալիրով և եղանակով, որը կերաշխավորի Օրագրի շարունակականությունը և բնականոն ընթացքը,
- (d) Կոնցեսիոների առանձին իրավունքների և ակտիվների օտարում կարող է թույլատրելի լինել միայն այն դեպքում, եթե դա էական բացասական ազդեցություն չի ունենա Օրագրի շարունակականության և բնականոն ընթացքի վրա, և
- (e) Կառավարությունը նախապատվության իրավունք ունի Կոնցեսիոների բաժնեմասնակցության ձեռքբերման հարցում, այդ թվում՝ կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում, սակայն բացառությամբ բաժնեմասնակցությունը բաց աճուրդով կամ այլ բաց սակարկություններով ձեռք բերելու դեպքերի:

8.3 Կառավարությունն իրավունք ունի վաղաժամկետ դադարեցնել սույն Պայմանագրին՝ այդ մասին գրավոր ծանուցելով Կոնցեսիոներին, եթե Կոնցեսիոների կողմից թույլ է տրվում Կառավարության նախապատվության իրավունքի կամ Կոնցեսիայի զիջման կամ Կոնցեսիոների նկատմամբ հսկողության փոխանցման հետ կապվախ սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների որևէ էական խախտում:

ՀՈՂՎԱԾ III  
ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

9 ԵՒՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Հայաստանի Հարավային Երկաթուղու շինարարությունը կմեկնարկի

Concessionaire, provided, however, that no person, or group of persons or entities acting in concert, may control the Concessionaire or its immediate shareholder if such persons are objectionable to the Government on grounds of national security. The Concessionaire undertakes to ensure that the Government is notified in advance about the possibility of any such change, which may result in change of control of the Concessionaire, and any such change can be implemented only subject to the Government presenting no objection to the Concessionaire or not exercising its rights of first refusal to buy any shareholding interest in the Concessionaire or its immediate shareholder within 30 (thirty) days from being notified. In this connection the Concessionaire undertakes to arrange inclusion of such provisions in its and its immediate shareholder's shareholders' agreement, charter and/or other constitutive documents, which ensure the enforceability of the above requirements as to the transparency of the information for the Government, as well as to the legal mechanisms.

8.2 Alienation of the Concessionaire (the direct or indirect shareholding interest therein) or the Concessionaire's rights and assets related to the Project, as well as the step-in rights, shall be subject to the following conditions:

- (a) the candidacy of the person acquiring the Concessionaire or the Concessionaire's rights and assets or stepping-in shall not be unacceptable to the Government on grounds of national security;
- (b) the Concessionaire's rights and assets may be alienated only to such person or persons, which are able to provide the continuity of and the proper progress on the Project;
- (c) the Concessionaire's rights and assets may be alienated in such a manner and composition, which would ensure the continuity of and the proper progress on the Project;
- (d) individual rights and assets of the Concessionaire may be alienated only if such alienation does not have a material adverse effect on the continuity of or the proper progress on the Project; and
- (e) the Government shall enjoy rights of first refusal in acquiring shareholding interest in the Concessionaire, including in case of increase of the equity capital, except for any acquisition of the shareholding interest through open auction or any other public tender process.

ARTICLE III  
CONDITIONS PRECEDENT

9 CONDITIONS PRECEDENT TO CONSTRUCTION

Construction of the Southern Armenia Railway shall

այսպիսով պայմաններից յուրաքանչյուրի բավարարման կամ ստանալու դեպքում:

(a) «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության և Կոնցեսիոների միջև պայմանագրի կնքում իրենց համապատասխան երկաթուղիները կապող երկաթգծերի վերաբերյալ (որպես «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի պարտավորությունների երաշխավոր պետք է հանդես գա «Ռուսաստանյան երկաթուղիներ» փակ բաժնետիրական ընկերությունը):

(b) Կոնցեսիոների և Կառավարության միջև համաձայնեցված սահմանակից երկրների երկաթուղային օպերատորների և Կոնցեսիոների միջև պայմանագրի (պայմանագրերի) կնքում իրենց երկաթուղիները կապող երկաթգծերի վերաբերյալ (Կոնցեսիոների կողմից նպատակահարմար համարվելու դեպքում որպես նման երկաթուղային օպերատորների պարտավորությունների երաշխավոր պետք է հանդես գան դրանց վերահսկիչ փաթեթի սեփականատերերը):

(c) Կառավարության և Կոնցեսիոների միջև պայմանագրի կնքում ռազմավարական նշանակության բեռներ Հայաստանի Հարավային երկաթուղով փոխադրելու վերաբերյալ՝ Կառավարության կողմից սահմանված կարգով և պայմաններով: Ռազմավարական նշանակության բեռների փոխադրման վերաբերյալ պայմանագիրը պետք է, ի թիվս այլոց, նախատեսի (i) ռազմավարական նշանակության բեռների փոխադրման նվազեցված սակագների և այլ չափանիշների որոշման այնպիսի ողջամիտ մոտեցումներ, որոնք Կոնցեսիոների համար չեն առաջացնում անորոշ անսահմանփակ պարտավորություններ կամ ծախսեր և (ii) Կառավարության պարտավորությունը՝ սուբսիդավորելու ռազմավարական նշանակության բեռների փոխադրումը կամ հատուցելու Կոնցեսիոներին, եթե որևէ օրացուցային տարվա ընթացքում ռազմավարական նշանակության բեռների փոխադրման Կոնցեսիոների պարտավորությունները ըստ կիրառելի Օրենսդրության դուրս են գալիս ըստ վերը նշվածի համաձայնեցված չափանիշների սահմաններից:

(d) Կողմերի միջև համաձայնեցված Բարենպաստ Ռեժիմի գործարկում:

(e) Օրագրի տեխնիկական, կոմերցիոն, ֆինանսական, բնապահպանական և սոցիալական իրագործելիությունը հաստատող մեկ կամ ավելի առաջնակարգ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված իրագործելիության ուսումնասիրությունների (միասնաբար «Իրագործելիության Ուսումնասիրություն») ստացում և վերջնական ընդունում Կոնցեսիոների կողմից: Ի թիվս այլ հարցերի, Իրագործելիության Ուսումնասիրությունը պետք է (i) անդրադառնա այն տարածքին («Միջանցք»), որի նկատմամբ Կոնցեսիոները պետք է ունենան անվճար առաջնային սերվիտուտ կամ անհատույց առաջնային օգտագործման իրավունք, (ii) ներառի աշխատանքային նախագծերը, ինչպես նաև (iii) անդրադառնա Հայաստանի Հարավային երկաթուղու կառուցման և շահագործման հանձնման (գործարկման) ուղենիշ փուլերին և ժամկետներին:

(f) Կառավարության կողմից Միջանցքի հաստատում:

(g) Կառավարության կողմից 22.2 Բաժնի [Միջանցքի Ձեռքբերում և Շնորհում] համաձայն Միջանցքի նկատմամբ իրավունքների շնորհում Կոնցեսիոներին:

(h) Օրագրի իրականացման համար անհրաժեշտ կամ ցանկալի բոլոր թույլտվությունների ստացում, փորձաքննությունների իրականացում՝ Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով:

(i) Ողջ Հայաստանի Հարավային երկաթուղու համար մեկ կամ ավելի փորձառու ընկերությունների հետ նախագծման, կառուցման և

commence when each of the following conditions has been satisfied or waived:

(a) Agreement between "South-Caucasian Railway" closed joint stock company and the Concessionaire regarding rail linkages between their respective railways (the obligations of "South-Caucasian Railway" shall be guaranteed by "Russian Railways" closed open joint-stock company);

(b) Agreement(s) between the Concessionaire and railway operators from bordering countries, as agreed between the Concessionaire and the Government, regarding rail linkages between their railways (where advisable in the opinion of the Concessionaire, the obligations of such railway operators shall be guaranteed by their controlling owners);

(c) Agreement between the Government and the Concessionaire regarding haulage of strategic freight on the Southern Armenia Railway at the terms and conditions set forth by the Government. The agreement regarding haulage of strategic freight shall, *inter alia*, regulate in a reasonable manner (i) the approaches to defining reduced rates and other parameters of haulage of strategic freight in a manner not creating uncertain unlimited liabilities or costs for the Concessionaire, and (ii) the obligation of the Government to subsidize haulage of strategic freight or indemnify the Concessionaire if during any calendar year the Concessionaire's obligations to carry strategic freight under the applicable Legislation exceeds the parameters agreed as per above;

(d) Coming into force of the Favorable Regime agreed upon between the Parties;

(e) Feasibility studies prepared by one or more first-class specialized firms confirming the technical, commercial, financial, environmental and social feasibility of the Project (collectively, the "Feasibility Study") and final acceptance thereof by the Concessionaire. The Feasibility Study shall, *inter alia*, (i) reflect the territory (the "Corridor"), in respect of which the Concessionaire shall have free preferred right-of-way or free preferred right of use, (ii) include working designs, as well as (iii) reflect the construction and commissioning milestones for the Southern Armenia Railway;

(f) Confirmation of the Corridor by the Government;

(g) Grant by the Government to the Concessionaire the rights to the Corridor, as provided at Section 22.2 [Corridor Acquisition and Grant];

(h) Receipt of all Permits, conduct of expert examinations in accordance with the procedures established by the Legislation of the Republic of Armenia, as may be required or desirable for the implementation of the Project;

(i) Design, construction and equipment procurement agreement(s) for the entire Southern Armenia Railway

արքայազորումների գնումների մասին պայմանագրի (պայմանագրերի) կնքում (միասին) «Շինարարական Պայմանագրեր».

with one or more experienced firms (collectively, the "Construction Agreements");

- (j) Շրագրի իրականացման համար ֆինանսավորման պայմանագրերի կնքումը, որոնք Կոնցեսիոների համար բավարար են, իրիվն այլոց, հետևյալ պարտավորությունների կատարման համար. (i) Շինարարական Պայմանագրերով ստանձնած պարտավորություններ և (ii) Հայաստանի Հարավային Երկաթուղու շահագործում ու սպասարկում այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է բավարար եկամուտներ գոյացնելու համար պարտավորությունները վրա հասնելուն պես կատարելու համար («Շրագրի ֆինանսավորում»), և
- (k) այլ փոխադարձ համաձայնեցված պայմաններ:

- (j) Execution of the financing agreements for the implementation of the Project sufficient for Concessionaire, among other things, (i) to carry out its obligations under the Construction Agreements, and (ii) to operate and maintain the Southern Armenia Railway until such time as it generates income sufficient to meet its obligations as they become due ("Project Financing"); and
- (k) Other mutually agreed conditions.

**10 ԵԱՀԱԳՈՐԾԱԼ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ**

**10 CONDITIONS PRECEDENT TO OPERATIONS**

Հայաստանի Հարավային Երկաթուղու շահագործումը կմեկնարկի հետևյալ պայմաններից յուրաքանչյուրի բավարարման կամ արձակման դեպքում.

Operation of the Southern Armenia Railway shall commence when each of the following conditions has been satisfied or waived:

- (a) Հայաստանի Հարավային Երկաթուղու հանձնումը շահագործման՝ Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված եղմերին համապատասխան.
- (b) Հայաստանի Հարավային Երկաթուղու շահագործման և սպասարկման համար անհրաժեշտ կամ ցանկալի բոլոր թույլտվությունների ստացում. և
- (c) այլ փոխադարձ համաձայնեցված պայմաններ:

- (a) Commissioning of the Southern Armenia Railway in compliance with the norms established by the Legislation of the Republic of Armenia;
- (b) Receipt of all Permits necessary or advisable for the operation and maintenance of the Southern Armenia Railway; and
- (c) Other mutually agreed conditions.

**11 ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵՆԱԿԱՍՏՈՒԹՅՈՒՆ**

**11 BENEFIT OF CONDITIONS PRECEDENT**

11.1 Յուրաքանչյուր կախապայման դասվում է հետևյալ խմբերից մեկին՝

11.1 Each condition precedent shall be classified into one of the following categories:

- (a) Երկու Կողմերի համար բարենպաստ կախապայմաններ.
- (b) բացառապես Կառավարության համար բարենպաստ կախապայմաններ, կամ
- (c) բացառապես Կոնցեսիոների համար բարենպաստ կախապայմաններ:

- (a) Conditions for the benefit of both Parties;
- (b) Conditions for the exclusive benefit of the Government; or
- (c) Conditions for the exclusive benefit of the Concessionaire.

11.2 Կողմը կարող է արձակել իր համար բարենպաստ կախապայմանը: Երկու Կողմերի համար բարենպաստ կախապայմանները կարող են արձակվել միայն համատեղ:

11.2 A Party who benefits from a condition may waive such condition. Conditions for the benefit of both Parties may be waived only mutually.

11.3 Երկու Կողմերի համար բարենպաստ են 9(բ), 9(գ), 9(դ), 10(ա) և 10(բ) կետերում նշված կախապայմանները:

11.3 Conditions precedent provided at Sections 9(e), 9(i), 9(j), 10(a) and 10(b) are for the benefit of both Parties.

11.4 Կոնցեսիոների համար բարենպաստ են 9(ա), 9(բ), 9(գ), 9(դ), 9(ե), 9(զ) և 9(հ) կետերում նշված կախապայմանները:

11.4 Conditions precedent provided at Sections 9(a), 9(b), 9(c), 9(d), 9(f), 9(g) and 9(h) are for the benefit of the Concessionaire.

11.5 Եթե Կողմերը 9(կ) և 10(զ) Բաժինների համաձայն փոխադարձ համաձայնությամբ սահմանում են այլ կախապայմաններ, ապա, կասկածները բացառելու համար, Կողմերը կսահմանեն այդ կախապայմանների բարենպաստությունը:

11.5 In case the Parties mutually agree on other conditions precedent in accordance with Sections 9(k) and 10(c), the Parties will indicate, for the avoidance of doubt, the benefit of such conditions precedent.

**ՀՈՂՎԱԾ IV  
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ**

**ARTICLE IV  
DURATION**

**12 ԿՈՆՑԵՍԻՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ**

**12 DURATION OF CONCESSION**

Կոնցեսիայի տևողությունը հետևյալ 4 (չորս) ժամանակահատվածների հանրագումարն է՝

The duration of the Concession is the aggregate of the following 4 (four) periods:

- (a) Իրագործելիության Ուսումնասիրության Ժամանակահատված՝ սկսվում է սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից և տևում է մինչև Կոնցեսիոների կողմից Իրագործելիության Ուսումնասիրության վերջնական ընդունումը և Կառավարության կողմից Միջանցքի հաստատումը.

- (a) The Feasibility Study Period: this period shall run from the commencement of the Concession until final acceptance of the Feasibility Study by the Concessionaire and confirmation of the Corridor by the Government;

- (b) Մրագրի Ֆինանսավորման Ժամանակահատված՝ սկսվում է իրագործելիության Ռուսումնասիրության Ժամանակահատվածի ավարտվելու պահից և տևում է մինչև Մրագրի Ֆինանսավորման շրջանակներում առաջին վճարումը Կոնցեսիոներին.
- (c) Ենթարարության Ժամանակահատված՝ սկսվում է Մրագրի Ֆինանսավորման Ժամանակահատվածի ավարտվելու պահից և տևում է մինչև Հայաստանի Հարավային Երկաթուղու հանձնումը շահագործման և Հայաստանի Հարավային Երկաթուղու շահագործման համար անհրաժեշտ Թույլտվությունների տրամադրումը Կոնցեսիոներին, և
- (d) Շահագործման Ժամանակահատված՝ սկսվում է Ենթարարության Ժամանակահատվածի ավարտման պահից և տևում է 30 (երեսուկ) տարի՝ պայմանով, որ Շահագործման Ժամանակահատվածը կտևի Ենթարարության Ժամանակահատվածի ավարտման պահից հաշված 50 (հիսուկ) տարի, եթե Կոնցեսիոները մինչև Շահագործման Ժամանակահատվածի 20-րդ (քսաներորդ) տարվա ավարտը ծանուցի Կառավարությանը՝ լրացուցիչ 20 (քսան) տարով Կոնցեսիան և սույն Պայմանագիրը երկարաձգելու վերաբերյալ: Նման ծանուցման դեպքում Կողմերը պարտավորվում են բարեխղճորեն բանակցել սույն Պայմանագրում Կողմերից որևէ մեկի կարծիքով անհրաժեշտ կամ ցանկալի փոփոխությունների կատարման վերաբերյալ:

**13 ԲԱՐԵՎԱՍՏ ՌԵՃԻՄ**

13.1 Կոնցեսիոներն իրազեկել է Կառավարությանը, որ Մրագրի իրագործելիությունը կարող է կախված լինել որոշակի բարենպաստ ռեժիմի սահմանումից՝ Կոնցեսիայի ողջ ժամանակահատվածի ընթացքում, որի կիրառումը պետք է հետապնդի Մրագրի հետ կապված ռիսկերի նվազեցման նպատակ՝ ներառյալ ֆինանսավորման, կառուցման, շահագործման և սպասարկման ծախսերի նվազեցման միջոցով («Բարենպաստ Ռեժիմ»):

13.2 Բարենպաստ Ռեժիմը կարող է վերաբերել Կոնցեսիոների, դրա բաժնետերերի, փոխատուների, աշխատողների, կապալառուների, մատակարարների և ծառայություն մատուցողների նկատմամբ կիրառվող հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարներին, ինչպես նաև հաշվապահական հաշվառման վարմանը, և ենթակա է համաձայնեցման կողմերի միջև ստորև նշված կարգով.

- (a) Կառավարությունը սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո շուտափույթ կտրամադրի Կոնցեսիոներին բոլոր այն հարկային և մաքսային արտոնությունների նկարագրությունը, որոնց համապատասխանում է Կոնցեսիոները ըստ Օրենսդրության.
- (b) Կոնցեսիոները սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 2 (երկու) ամսվա ընթացքում գրավոր կներկայացնի Կառավարությանն արտոնությունների նվազագույն ցուցակը, որոնք, ի յուրմե օրենսդրությամբ արդեն իսկ նախատեսված արտոնությունների, Կոնցեսիոների նախնական գնահատմամբ ողջամտորեն էական են Մրագրի իրագործելիության համար.
- (c) Կառավարությունը 1 (մեկ) ամսվա ժամկետում գրավոր կձևակերպի Կոնցեսիոներին այն արտոնությունների մասին, որոնց տրամադրման հարցը (ուղղակիորեն կամ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու միջոցով) Կառավարությունը պատրաստ է ներառել իր օրակարգում.
- (d) Կոնցեսիոների գրավոր համաձայնությունը ստանալուն պես Բարենպաստ Ռեժիմը կհամարվի Կողմերի միջև փոխադարձաբար համաձայնեցված, և Կառավարությունը շուտափույթ ձևով կկիրառի Բարենպաստ Ռեժիմի գործադրմանն ուղղված գործողությունների, որոնց արդյունքների մասին տեղյակ կպահի Կոնցեսիոներին:

- (b) The Project Financing Period: this period shall run from the end of the Feasibility Study Period until the first disbursement to the Concessionaire under the Project Financing;
- (c) The Construction Period: this period shall run from the end of the Project Financing Period until the commissioning of the Southern Armenia Railway and granting to the Concessionaire of the Permissions required for operation of the Southern Armenia Railway; and
- (d) The Operations Period: this period shall run from the end of the Construction Period for 30 (thirty) years, provided that the Operations Period shall run for 50 (fifty) years from the end of the Construction Period if the Concessionaire by the end of the 20th (twentieth) year of the Operations Period notifies the Government of extending the Concession and this Agreement for an additional 20 (twenty) years. In case of such notification the Parties shall negotiate in good faith with respect to making amendments to this Agreement, which are necessary or desirable in the view of any of the Parties.

**13 FAVORABLE REGIME**

13.1 The Concessionaire has advised the Government that the feasibility of the Project may depend upon establishing certain favorable regime for the entire term of the Concession, the application of which shall pursue the goal of reducing the risks associated with the Project including through the reduction of the costs of financing, construction, operation and maintenance (the "Favorable Regime").

13.2 The Favorable Regime may relate to taxes, customs and other obligatory payments, applicable to the Concessionaire, its shareholders, lenders, employees, contractors, suppliers and service providers, as well as accounting, and shall be agreed upon between the Parties as follows:

- (a) Upon this Agreement entering into force, the Government shall promptly provide the Concessionaire with the description of all those tax and customs privileges to which the Concessionaire is entitled by the Legislation;
- (b) Within 2 (two) months from this Agreement entering into force, the Concessionaire shall submit to the Government in writing the minimum list of privileges, which, in addition to the privileges already set forth by the Legislation, are substantial for the feasibility of the Project according to the Concessionaire's preliminary assessment;
- (c) The Government shall within 1 (one) month notify the Concessionaire in writing about those privileges, the issue of provision of which (directly or through a legislative initiative) the Government agrees to include in its agenda;
- (d) Upon receipt of the Concessionaire's written consent, the Favorable Regime shall be deemed mutually agreed between the Parties and the Government shall promptly undertake steps towards enactment of the Favorable Regime, notifying the Concessionaire about the results.



13.3 Առանց վերը նշվածի վերաբերյալ որևէ վերապահման, Կառավարությունը չի կարող նախապես երաշխավորել որևէ արտոնության տրամադրումը որևէ կոլեզիալ մարմնի որոշմամբ կամ նման որոշման վավերացումը:

13.3 Without any prejudice to the above, the Government cannot guarantee in advance the provision of any privileges by a decision of any collective body and further ratification thereof.

14 ՕՐԵՆԱՂՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈՒՄՈՒԹՅՈՒՆ

14 CHANGE OF LEGISLATION

14.1 Կոնցեսիոները իրազեկել է Կառավարությանը, որ Մրագրի իրագործելիությունը կարող է կախված լինել Օրենսդրության կայունությունից՝ Կոնցեսիայի ողջ տևողության ընթացքում, և որ «Օրենսդրվողա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով («Երաշխիքները Հայաստանի Հանրապետության Օրենսդրության փոփոխության դեպքում») սահմանված երաշխիքները չեն կարող համարվել բավարար ազդեցունակ՝ հաշվի առնելով Մրագրի ծավալը և երկարատև ընթացքը:

14.1 The Concessionaire has advised the Government that the feasibility of the Project may depend on the stability of the Legislation during the entire term of the Concession, and that the guarantees set forth in Article 7 ("Guarantees in Case of Change of Legislation of Republic of Armenia") of the Law of the Republic of Armenia "On Foreign Investment" cannot be found sufficiently effective, taking into account the scale and long-term nature of the Project.

14.2 Ի լրումն վերոնշյալի՝ Կոնցեսիոներն իրավունք ունի երկարաձգելու Կոնցեսիայի գործողության ժամկետը՝ Բաժին 56-ի համաձայն Կոնցեսիայի Գործողության ժամկետի երկարաձգումը՝ Օրենսդրության Անբարենկապատ Փոփոխության ազդեցությունները մեղմելու նպատակով:

14.2 In addition to the above, the Concessionaire shall be entitled to the extension of the term of validity of the Concession pursuant to Section 56 [Concession Period Extension] in order to mitigate the effects of Unfavorable Change of Legislation.

14.3 Ի լրումն վերոնշյալի՝ Կառավարությունը զերծ է պահում Կոնցեսիոներին Օրենսդրության Անբարենկապատ Փոփոխությունների բացասական ազդեցություններից և վնասներից, եթե Կոնցեսիայի ժամկետի երկարաձգումը բավարար չէ Օրենսդրության Անբարենկապատ Փոփոխության ազդեցությունները մեղմելու համար:

14.3 In addition to the above, the Government shall hold the Concessionaire harmless and fully indemnified from the effects of Unfavorable Change of Legislation if the extension of the term of validity of the Concession is not sufficient to mitigate the effects of Unfavorable Change of Legislation.

ՀՈՂՎԱՍՏ V

ARTICLE V

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄՐԱՆՎՅՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

COMPETING TRANSPORTATION SYSTEMS

15 ԿՈՆԾԵՍԻԱ ՉՆՈՐՇԵԼ

15 NO GRANT

Սույն Պայմանագիրը կնքելուն և Մրագրի իրականացման հետ կապված ֆինանսական և կոմերցիոն զգալի ռիսկեր ստանձնելուն Կոնցեսիոներին հանելու համար Կառավարությունը պարտավորվում է որևէ դեպքում որևէ անձի, այդ թվում՝ որևէ Պետական Մարմնի, չձեռնիլ կոնցեսիոն կամ այլ իրավունք կամ արտոնություն Հայաստանի հարավային սահմանին, Մեղրիին կամ Հայաստանի հարավային սահմանին հարակից հայաստանյան տարածքներին կապող երկաթուղու ֆինանսավորման, նախագծման, կառուցման, փորձապետման, գործարկման, վերականգնման, շահագործման և (կամ) սպասարկման համար, այդ թվում որևէ երկաթուղու, որը չի շահագործվում սույն Պայմանագրի ստորագրման օրվա դրությամբ:

In order to induce the Concessionaire to enter into this Agreement and to assume substantial financial and commercial risks in connection with the implementation of the Project, the Government shall not at any time grant to any person, including any State Authority, any concession or other right or privilege to finance, design, construct, possess, commission, rehabilitate, operate and/or maintain any railway at the southern border of Armenia or connecting with Meghri or territories adjacent to the southern border of Armenia, including any railway not in service on the date of signing this Agreement.

16 ԱՐԱԳՇՆԱԿԱՆ ԶԱՆԱՊԱՐԸ

16 HIGH SPEED ROAD

Սույն Պայմանագրի ոչ մի դրույք չի խոչընդոտում Կառավարությանը կոնցեսիա տրամադրել Կոնցեսիոներին և (կամ) դրա հետ փոխկապակցված մեկ կամ մի քանի անձանց՝ Հայաստանի Հարավային Արագընթաց ճանապարհի ֆինանսավորման, նախագծման, կառուցման, վերականգնման, տիրապետման, գործարկման, շահագործման և սպասարկման համար:

Nothing in this Agreement shall prevent the Government from granting to the Concessionaire and/or one or more of its affiliates a concession to finance, design, construct, rehabilitate, possess, commission, operate and maintain the Southern Armenia High Speed Road.

ՀՈՂՎԱՍՏ VI

ARTICLE VI

ԻՐԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

FEASIBILITY STUDY

17 ԻՐԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԿ

17 COMMENCEMENT OF FEASIBILITY STUDY

Կոնցեսիոները սկսում է Իրագործելիության Ուսումնասիրությունը ոչ ոչ քան սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուն հաջորդող 6 (վեց) ամսվա ընթացքում՝ այդ մասին ծանուցելով Կառավարությանը: Այդուհանդերձ, եթե Կողմերը չեն գալիս նախնական համաձայնության Բարենկապատ Ռեժիմի և Տեխնիկական Առաջադրանքի վերաբերյալ, ապա Կոնցեսիոներն իրավունք ունի լուծել Պայմանագիրը այդ մասին ծանուցելով Կառավարությանը՝ առանց Իրագործելիության Ուսումնասիրությունը սկսելու պարտավորության, և առանց Կողմերի համար որևէ հետագա

The Concessionaire shall commence the Feasibility Study no later than 6 (six) months following this Agreement entering into force with a notice to the Government. However, if the Parties do not reach a preliminary agreement regarding the Favorable Regime and the Terms of Reference, the Concessionaire shall have the right to terminate the Agreement by notice to the Government with no obligation to commence the Feasibility Study, and with



**18 ՄԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՐՈՒԹՅՈՒՆ**

Իրագործելիության Ուսումնասիրությունն իրականացվում է համապատասխան համաձայն՝

18.1 Սույն Պայմանագրի, ներառյալ Օրագրի չափանիշների՝ ըստ սույն Պայմանագրի Հավելված «Ա»-ում (Օրագրի Չափանիշներ) ներկայացվածի:

18.2 Խամապատասխան ժամանակահատվածում գործող Օրենսդրության:

18.3 Համաշխարհային Բանկի Խմբի «Շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության մասին» ուղեցույցների՝ ներառյալ երկաթուղիների համար կիրառվողները, որոնք գործում են համապատասխան ժամանակահատվածում:

18.4 Սույն գործելակերպերի, մեթոդների, ակտերի և խնամքի և անվտանգության ստանդարտների, որոնք ողջամտության առանձնանելու կկիրառվեն միևնույն տիպի գործունեությունում ներգրավված շրջահայաց, հնուտ և փորձառու օտարերկրյա ներդրողը, և որոնք համապատասխանում են ոլորտում առկա բարեխիղճ գործելակերպերին՝ հաշվի առնելով դրանց համապատասխանությունը սույն Պայմանագրին և Հայաստանի Հանրապետության Օրենսդրությանը, և

18.5 Իրագործելիության Ուսումնասիրության Տեխնիկական Առաջադրանքի հետ, որը պետք է համապատասխանի վերը նշված կետերին և համաձայնեցված լինի Կառավարության հետ:

**19 ՏԵՄԻՎԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱԹ**

19.1 Տեխնիկական Առաջադրանքը պետք է սահմանի Իրագործելիության Ուսումնասիրության նկատմամբ ներկայացվող պահանջները, արտացոլի Իրագործելիության Ուսումնասիրության և Օրագրի հիմնական նշանակությունը, տեխնիկական և օժանդակական պահանջները, որակի չափանիշները, փաստաթղթավարության կազմը և դրա ստեղծման անհրաժեշտ փուլերի վերաբերյալ ցուցումները, ինչպես նաև այլ հատուկ պայմաններ: Տեխնիկական Առաջադրանքը պետք է արտացոլի նաև Օրագրի սահմանափակումները, ներառյալ Միջանցքի առանձնափակումները՝ ըստ բնապահպանական, բնօգտագործման, ազդային անվտանգության և ռազմավարական նկատառումների:

19.2 Սույն Պայմանագրի կնքումից 60 (վաթսու) օրվա ընթացքում Կառավարությունը կամ իրագործված Պետական Մարմինը լրացվում և Կոնցեսիոներին է ներկայացնում Իրագործելիության Ուսումնասիրության Տեխնիկական Առաջադրանքի նախագիծը:

19.3 Տեխնիկական Առաջադրանքի նախագիծը ստանալուց 30 (երեսու) օրվա ընթացքում Կոնցեսիոները Կառավարությանը ներկայացնում է դրա վերաբերյալ իր դիտողությունները և առաջարկները: Հակառակ դեպքում Տեխնիկական Առաջադրանքը համարվում է Կողմերի միջև համաձայնեցված և հաստատված:

19.4 Կոնցեսիոների կողմից առաջարկներ և դիտողություններ ներկայացվելու դեպքում Կողմերը բարեխիղճորեն և ողջամտորեն բանակցում են Տեխնիկական Առաջադրանքի համաձայնեցման վերաբերյալ և փոխադարձ համաձայնության գալու դեպքում համատեղ հաստատում են Իրագործելիության Ուսումնասիրության Տեխնիկական Առաջադրանքը:

**20 ՄԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ**

20.1 Իրագործելիության Ուսումնասիրության մեկնարկումից հաշված 18 (տասներ) ամսվա ընթացքում այն պետք է ավարտին հասցվի և, Կոնցեսիոների նախնական ընդունման արժանանալու դեպքում, դրա անվերին լեզվով կազմված օրինակը՝ հայերեն թարգմանության հետ միասին ներկայացվում է Կառավարությանը:

no further obligation on either Party.

**18 FEASIBILITY STUDY**

The Feasibility Study shall be prepared in accordance with:

(a) This Agreement, including the Project parameters set out in Schedule A hereto [Project Parameters];

(b) The Legislation in force at the relevant time;

(c) The World Bank Group's Environmental, Health and Safety Guidelines, including those for railways, in force at the relevant time;

(d) Those practices, methods, acts and standard of care and safety that would reasonably be expected to be exercised by a prudent, skilled and experienced foreign investor engaged in the same types of undertakings, and would be consistent with good industry practices, taking into account their conformity with this Agreement and the Legislation of the Republic of Armenia; and

(e) The terms of reference for conducting the Feasibility Study in line with the aforementioned clauses and in coordination with the Government.

**19 TERMS OF REFERENCE**

